Ազգ
Azg
30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2004 ՀԻՆԳՇԱԲԹԻ 171 (3102)

Ծաղկաձորում լրագրողների դեմ բռնարարքի գործով դատը նախատեսված է սկսել հոկտեմբերի 7-ին

ԵՐԵՎԱՆ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ: Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանում հոկտեմբերի 7-ին դատավոր Նունե Պողոսյանի նախագահությամբ կսկսվի Ծաղկաձորում լրագրողների դեմ բռնարարքի գործով դատը: Այս մասին հայտնեցին դատարանից:

Հիշեցնենք, որ օգոստոսի 24-ին «Ֆոտոլուր» լրատվական գործակալության ֆոտոթղթակից Մխիթար Խաչատրյանի եւ «Առավոտ» օրաթերթի թղթակից Աննա Իսրայելյանի նկատմամբ բռնարարքի քրգործով մեղադրյալը Երեւան քաղաքի բնակիչ, 1961թ.-ին ծնված Գագիկ Ռազմիկի Ստեփանյանն է: Վերջինս մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի «Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը» եւ «Խուլիգանություն» հոդվածներով: Գործը Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան էր ուղարկվել դեռեւ սեպտեմբերի 6-ին, սակայն դատարանում ստացվել էր միայն սեպտեմբերի 23-ին:

Իրաքահայերի վիճակը ծանր է

Հանդիպում Մոսուլի հոգեւոր հովվի Տէր Գարեգին քահանայի հետ

Օրերս Երեւանում էր Իրաքի թեմի առաջնորդի պատվիրակ, Իրաքի Մոսուլ քաղաքի հոգեւոր հովիվ Տ. Գարեգին ավագ քհն. Հովսեփյանը: Նա Իրաքի մեր ամենաերեց հոգեւորականն է եւ շուրջ 35 տարի է քահանայագործում է այնտեղ: Մեր զրույցը հոգեւոր հովվի հետ, բնականաբար հիմնականում պետք է վերաբերեր իրաքահայության ներկա վիճակին:



«Այս օրերին իրաքահայերի վիճակը շատ ծանր է, մանավանդ ՀՀ պաշտպանության նախարարի այն հայտարարությունից հետո, ըստ որի 50 բժիշկ եւ սակրավոր պետք է կոալիցիոն ուժերին միանալու համար գան Իրաք, այսպես սկսեց իր խոսքը Իրաքի թեմի առաջնորդի պատվիրակը: Այնինչ երբ դեռ նման լուրեր չկային, ամեն ինչ հանգիստ էր, հայերն այստեղ ազգային ոչ մի խտրականության չէին ենթարկվում»:

Հոգեւոր հովիվն ասում է, որ արաբները պաշտպանության նախարարի այս հայտարարությունը մեծ ատելությամբ եւ թշնամանքով են ընդունել: «Չէ՞ որ Եղեռնի օրերին մենք ձեզ ընդունեցինք եւ պատսպարեցինք, հիմա դուք ամերիկացիների հետ մեր դե՞մ եք պատերազմելու», ասում էին արաբները չիմանալով՝ Հայաստանից եկողները բժիշկնե՞ր են, թե՞ զինվորականներ: Այժմ իրաքահայերի վիճակը շատ վատ է, մարդիկ ահաբեկված են: Համատարած վախի մթնոլորտում նույնիսկ հոգեւորականի հագուստով դուրս գալն է վտանգավոր», ասում է Տէր Գարեգինը:

Տես էջ 2

ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Օսկանյանի հանդիպումները Արաբական լիգայի քարտուղարի եւ Եգիպտոսի ԱԳ նախարարի հետ

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 59-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով Նյու Յորքում գտնվող ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը սեպտեմբերի 28-ին շարունակել է երկկողմ հանդիպումները:

Արաբական Լիգայի գլխավոր քարտուղար Ամր Մուսայի հետ հանդիպմանը քննարկվել է հատուկ հրավիրյալի կարգավիճակով Հայաստանի մասնակցությունը իսլամական աշխարհի այդ կարեւոր կազմակերպության աշխատանքներին: Երկուստեք գոհունակություն հայտնելով այդ կապակցությամբ՝ համաձայնություն է ձեռք բերվել, որ դրա վերաբերյալ փոխըմբռնման հուշագիրը առաջիկայում կստորագրվի Երեւանում կամ Կահիրեում:

Ինչպես հայտնում են ՀՀ ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչությունից, մինչ այդ Վ. Օսկանյանը հանդիպել էր նաեւ Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Ահմեդ Աբուլ Ղեյթի հետ, որի հետ քննարկվել էին երկկողմ հարաբերությունների ներկա վիճակի եւ հեռանկարների, ինչպես նաեւ միջազգային եւ տարածաշրջանային արդի զարգացումների հետ կապված մի շարք հարցեր:

Ռուս-վրացական սահմանի փակումը բեռնափոխադրումների այլընտրանք է պարտադրում Հայաստանին

Հակաահաբեկչական միջոցառումների շարքում ՌԴ իշխանությունները որոշեցին փակել Վրաստանի հետ սահմանը, ինչն անցանկալի հետեւանքներ կունենա Հայաստանի քաղաքական եւ տնտեսական դաշտում: Վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հավաստմամբ, հարցն անմիջապես երկրորդ օրվանից ՀՀ իշխանությունների ուշադրության կենտրոնում էր, եւ անգամ Չինաստանից ՀՀ նախագահը հեռախոսազրույցներ է ունեցել ՌԴ նախագահի հետ: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել Վրաստանի վարչապետի հետ որոշ մեքենաների անցումը թույլատրելու կապակցությամբ, սակայն Հայաստանն առայժմ լուծումներ չունի: Վերջերս նորոգվում է նաեւ Նովոռոսիյսկի նավահանգիստը, ինչն ավելի է բարձրացրել բեռնափոխադրումների խնդիրը: Իժեւկի նավահանգստից օգտվելը պակաս դժվար չէ, քանի որ մեծ խցանումներ կան Ռուսաստան-Վրաստան սահմանում, եւ բացի այդ, բեռնափոխադրման այս ճանապարհը, վարչապետի հավաստմամբ, կարող է բերել թանկացումների:

Այժմ Ռուսաստանի եւ Վրաստանի սահմանապահների օգնությամբ փորձում են գտնել եւ Հայաստան մուտքը թույլատրել այն մեքենայի, որով բերվում է ատոմակայանի համար նախատեսված հատուկ յուղի մեքենա, առանց որի կարող է վտանգվել ատոմակայանի շահագործումը: Վարչապետի՝ հավաստմամբ, իշխանության բոլոր իրավասու օղակները շարունակում են բանակցությունները թե՛ Վրաստանի, թե՛ Ռուսաստանի իշխանությունների հետ:

Ն. Պ.

OTE-ն ՀՀ-ին պարտք է 170 մլն դոլար

Հայտարարում է Արշակ Սադոյանը

Կառավարության խորհրդարանի հարց ու պատասխանի ընթացքում Արշակ Սադոյանը հոխորտագին եւ սեփական ձայնի հզորությունը երկարատեւ ցույց տալու միջոցով փորձեց պարզել, թե ինչու «Արմենտելը» մինչ օրս աշխատում է մենաշնորհով: Արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը, միայն հարգելով ճշմարտությունն իմանալու հանրության իրավունքը, պատասխանեց, որ սահմանադրական դատարանի որոշման համաձայն, կառավարությունը պարտավոր է արտահայտել հեռահաղորդակցության ոլորտի կարգավորման ենթակա լինելը, քանի որ հանրային ծառայության յուրաքանչյուր ոլորտում սակագների ինքնուրույն սահմանումը կգործի ի վնաս հասարակության: Իսկ ոլորտի կարգավորման տեխնոլոգիաները մշակել է կապի նախարարությունը, ԱԺ-ն էլ առաջին ընթերցմամբ ընդունել է համապատասխան օրենք: Ըստ Դավիթ Հարությունյանի, կառավարությունն ապահովել է ոլորտի կարգավորման իր պարտականությունը: Արշակ Սադոյանի բղավոցների ներքո Դավիթ Հարությունյանը փաստեց, որ հեռահաղորդակցության ոլորտում մենաշնորհը բացառող Վազգեն Սարգսյանի առաջարկած օրինագիծը խորհրդարանում ներկայացրել է ինքը՝ նախարարը, վիժեցրել է Արշակ Սադոյանը:

Ն. Պ.

Պայթյուններ Թուրքիայում

Թիրախը HSBC բանկի մասնաշենքերն են

Սեպտեմբերի 28-ին Թուրքիան ականատես եղավ միաժամանակյա ահաբեկչական մի շարք պայթյունների, որոնք իրականացվել են ժամացույցի մեխանիզմով գործող ձայնային ռումբերի միջոցով: Պայթյունների հետեւանքով զոհվածներ կամ վիրավորներ չկան: Հատկանշական է, որ Ստամբուլում, Ադանայում եւ Իզմիրում կատարված ահաբեկչական պայթյունների թիրախներ են դարձել անգլիական HSBC բանկի մասնաշենքերը, իսկ Անկարայում՝ Թուրք-ամերիկյան միությունը: Ընդ որում թուրքական ոստիկանությանը հաջողվել է Ստամբուլում կանխել մեկ այլ պայթյուն՝ ժամանակին վնասազերծելով ձայնային ռումբը, որը նույնպես դրված էր HSBC բանկի մեկ այլ մասնաշենքի մոտ:

Հիշեցման կարգով նշենք, որ անցյալ տարի՝ նոյեմբերի երկրորդ կեսին, Ստամբուլում շուրջ 15 օրվա տարբերությամբ կատարված ահաբեկչական գործողություններում սինագոգների հետ որպես թիրախ էին ընտրվել Մեծ Բրիտանիայի գլխավոր հյուպատոսարանն ու անգլիական HSBC բանկի գլխավոր մասնաշենքը: Այդ գործողությունները տասնյակ մարդկանց կյանք էին խլել: Հ. Չ.

Սաակաշվիլին եւ Մամեդյարովը քննարկում են Կարս-Ախալքալաք երկաթգծի կառուցման հնարավորությունը

Պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը երեկ նախագահ Միխայիլ Սաակաշվիլու հետ քննարկել է «թուրքական Կարս եւ վրացական Ախալքալաք քաղաքների միջեւ երկաթգծային ճյուղի կառուցման հնարավորության հարցը», հաղորդում է «Նովոստի» գործակալությունը: «Վրաստանը եւ Ադրբեջանը ռազմավարական դաշնակիցներ են եւ որքան մեր երկրները կայուն եւ տնտեսապես զարգացած լինեն, այնքան լավ կլինի տարածաշրջանի ու ամբողջ աշխարհի համար», մամուլի ասուլիսում ասել է Մամեդյարովը՝ հավելելով, որ երկու երկրները ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը:

Ջավախքում դժգոհ են Վրաստանի «կրթական» քաղաքականությունից

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության որոշմամբ Ջավախքի դպրոցների ուսումնական ծրագրից հանվել է հայոց պատմությունը որպես պարտադիր առարկա, հաղորդում է Ախալքալաքի «Ա-Ինֆո» գործակալությունը: Այս ուսումնական տարվանից հայկական դպրոցներում հայոց պատմությունը դասավանդվում է ֆակուլտատիվ կարգով, որպես ոչ պարտադիր առարկա:

«Բազմազգ Վրաստան» հասարակական կազմակերպության նախագահ Առնոլդ Ստեփանյանն **«Ազգի»** հետ հեռախոսազրույցում նշեց, որ 1991 թ. ի վեր Ջավախքի դպրոցներում ուսումնական ծրագրում պարտադիր առարկաների շարքում չի եղել հայոց պատմությունը, այսինքն՝ վրացական պետությունը չի ֆինանսավորել: «Մենք տարիներ շարունակ փորձել ենք հայոց պատմությունը մտցնել պարտադիր առարկաների ցանկ, բայց չի հաջողվել, ինչպես այս տարի», ասաց Ստեփանյանը:

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության մեկ այլ որոշմամբ Ջավախքի դպրոցներում այսուհետեւ Վրաստանի պատմությունը դասավանդվելու է հայերենով, տպագրվել են դասագրքերը: Ստեփանյանն ասաց, որ «այսօր ոչ մեկը չի տեսել այդ դասագրքերը»: **«Ազգի»** տրամադրության տակ են վրացական «Արթանուջի» հրատարակչության հայերենով պատրաստած Վրաստանի պատմության դասագրքերը 9-րդ եւ 10-րդ դասարանների համար: Օրինակ, ըստ այդ դասագրքերի, պատմական Վրաստանի սահմաններն անցնում են Սեւանա լճի ափերով:

ՀՀ-ին անհրաժեշտ են 51 ինտելեկտուալ պատգամավորներ

Գտնում է Վահրամ Բաղդասարյանը

«Ընտրական օրենսգիրքը» դատափետելն ու նրան մեղադրյալի կարգավիճակ տալը սխալ է, մինչեւ հունվար մշակված եւ ժողովրդավարական չափանիշներին համապատասխան «Ընտրական օրենսգիրք» ունենալն անհրաժեշտ է, գտնում են խորհրդարանում արտահայտված քաղաքական ուժերը (բացի ընդդիմադիրներից) եւ խորհրդարանի վերջին երկու օրերի նիստերում քննարկում «Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրինագիծը: Երեկ քննարկվեցին ընտրական հանձնաժողովների ձեւավորման եւ համամասնական, մեծամասնական ընտրակարգերի հարաբերակցության խնդիրները: Առաջին խնդրում կարեւորվեց «Ընտրական օրենսգրքին» ծանոթացնող հատուկ դասընթացների կազմակերպումը, վստահված անձանց հանձնաժողովի անդամների լիազորություններ շնորհելը: Համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերի հարաբերակցության հարցում ՀՅԴ-ն, Արմեն Ռուստամյանի հավաստմամբ, «հավասար պաշտպանն է 100 տոկոսանոց համամասնական կարգի»: ՕԵ-ն նույնպես կողմ է մաքսիմալ համամասնական ընտրակարգին: ՄԱԿ-ը, Գուրգեն Արսենյանի հավաստմամբ, միայն անցումային շրջանի խնդիրները հաշվի առնելով կարող է հանդուրժել 80-20 տոկոս հարաբերակցությունը, այլապես ընդունելի է համարում միայն 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգը:



Ժողպատգամավոր Վահրամ Բաղդասարյանն էլ գտնում է, որ Հայաստանին պետք են 51 ինտելեկտուալ պատգամավորներ, ովքեր կզբաղվեն իրական օրենսդիր գործունեությամբ: Ասվածը Բաղդասարյանը փաստարկեց նրանով, որ վերջին 10 տարիներին քայքայվել է քաղաքական դաշտը շինծու կուսակցությունների, կեղծ կոալիցիայի, անձնական ատելության վրա հիմնված ընդդիմության պատճառով: Վահրամ Բաղդասարյանը հիշեցրեց նաեւ, որ կոալիցիան պատասխանատվություն է ստանձնել, ուրեմն պետք է գործի: Հանրապետականները, Սամվել Միկոյանի հավաստմամբ, գտնում են, որ պետք է պահպանել համամասնական, մեծամասնական ընտրակարգերի առկա հարաբերակցությունը:

Իսկ ավելի ուշ Հանրապետական կուսակցության նախագահ, վարչապետ Անդրանիկ Մարգարյանը հայտնեց, որ ընտրակարգերի հարաբերակցության հարցը կուսակցությունում քննարկվելու է ավելի ուշ, երբ պարզ կդառնա սահմանադրական փոփոխությունների ճակատագիրը: Իսկ ընդհանրապես Անդրանիկ Մարգարյանը գտնում է, որ կարեւորը ոչ թե համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերի հարաբերակցության հարցն է, այլ դրանից բխող գործընթացը: Ընտրական օրենսգրքերի քննարկումներին մասնակցած ԱԺ խումբ-խմբակցությունների ներկայացուցիչները, կարեւորելով հանդերձ ընդդիմության մասնակցությունը այդ կարեւորագույն փաստաթղթի մշակմանը, համարեցին, որ հարկավոր է օրենսգիրքն առաջին ընթերցմամբ ընդունել եւ մինչ երկրորդ ընթերցում ընկած ժամանակահատվածը աշխատել դրա լիակատար մշակման վրա: Երեկ, սակայն, ժամանակ չլինելու պատճառով քվեարկությունը չիրականացվեց:

ՆԱԻՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Օրինաց երկիրը» մերկացնում է պատգամավոր Հակոբ Հակոբյանին

«Գիտեմ, թե ԱԺ նախագահը եւ աշխատակազմի էս դդմը (նկատի ունի ԱԺ աշխատակազմի ղեկավար Հայկ Քոթանջյանին) ինչքան փողեր են տարել», երեկ ԱԺ նախասրահում բղավում էր պատգամավոր Հակոբ Հակոբյանը (Ճոյտ): Առիթը խորհրդարան-կառավարություն հարց ու պատասխանի ժամանակ Մհեր Շահգելդյանի այն հարցն էր, թե ինչ է անում կառավարությունը էջմիածնի հարկային տեսչությունում շորթված գումարները վերադարձնելու, 1999 թ. «Լինսի» վարկային ծրագրով «Ագրինեքս» էջմիածնի ջերմոցային տնտեսությանը տրամադրած 1 մլն 250 հազար ԱՄՆ դոլարի վարկը (50 հազարը վերադարձված է), ինքնալուծարման մեջ գտնվող «Ագրոբանկի» 652 հազար դոլար պարտքը վերադարձնելու համար:

«Օրինաց երկիր» կուսակցության ներկայացուցիչ Մհեր Շահգելդյանը տեղեկացրեց, որ փաստարկները բերվել են ԱԺ վերահսկիչ պալատի տվյալների հիման վրա եւ դրանք ուղիղ կապ ունեն ԱԺ պատգամավոր Հակոբ Հակոբյանի հետ: Խորհրդարանի նախագահն էլ պարզեց, որ ողջ փաստաթղթերը հանձնվել են ՀՀ գլխավոր դատախազություն: Ի պատասխան. պատգամավորի հարցի, ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը փաստեց, որ իր ղեկավարած գերատեսչության վերահսկողության վարչությունն էլ բազմաթիվ ստուգումներ է անցկացնում, որոնց արդյունքում պարզվում է, որ որոշ գումարներ ենթակա են վերադարձման, երբեմն էլ՝ վերաձեւակերպման: Հենց վերաձեւակերպման խնդիրն էլ, ըստ նախարարի, առաջացնում է գումարների մեծ տատանումներ:

Կառավարությունն էլ իր հերթին որոշ փաստաթղթեր է ուղարկել դատախազական մարմիններ: Իսկ «Ագրինեքս» ջերմոցային տնտեսությունը, նախարարի հավաստմամբ, աճուրդային կարգով հանվել է վաճառքի, որից ստացած գումարներով նախատեսվում է ծածկել «Լինսիի» վարկային ծրագրով տրամադրված գումարները:

Հարց ու պատասխանի ողջ ընթացքից հետո պատգամավոր Հակոբ Հակոբյանը վիրավորական արտահայտություններով հավելելով իր խոսքը, ըստ էության փորձեց տեղեկացնել, որ ինքն էլ հակափաստարկներ ունի ԱԺ նախագահի եւ այլոց մասին:

Ն. Պ.

«Ընդդիմությունը թող գրավոր ներկայացնի իր դիտողությունները»

Անդրադառնալով առանց ընդդիմության մասնակցության այնպիսի կարեւոր օրինագծի քննարկմանը, ինչպիսին է ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագիծը, Հանրապետական խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը այսպիսի առաջարկ արեց. «Յուրաքանչյուր քաղաքական ուժ ինքն է որոշում նիստերին մասնակցելու կամ չմասնակցելու խնդիրը: Ընդդիմությունը բոյկոտել է նիստերը, բայց ԱԺ նիստերի դահլիճը ընդամենը ամփոփումների խնդիր ունի: Կարելի է առանց նիստերի դահլիճում լինելու էլ ծանոթանալ դրանց, կարդալ եւ գրավոր ներկայացնել սեփական առաջարկությունները, որոնք կքննարկենք»:

Ընտրական օրենսգրքի փոփոխությունների նախագիծը հաշմանդամներին զրկո՞ւմ է ձայնի իրավունքից

Ընտրական օրենսգրքի փոփոխությունների օրենքի նախագծի հեղինակները վճռականապես մերժել են շարժական քվեատուփերի գաղափարը: Հայտնի է, որ այդպիսի առաջարկ արել էին ԵԱՀԿ դիտորդները եւ միջազգային այլ կազմակերպություններ: Հայաստանի ընտրապատմության մեջ հաշմանդամների համար նախատեսված այդ արկղերից լավագույնս օգտվում են այն կուսակցությունները, ում հաջողվում էր ավելի շատ շարժական արկղ ձեռք բերել, այնքան նրա շահելու շանսերը մեծանում էին:

Եվ այնքանով, որ քվեարկությունները նախատեսվում են միայն տեղամասերում, հաշմանդամները կամա թե ակամա զրկվում են ընտրելու իրավունքից: Օրենսդիրների համոզմամբ, սակայն, դա չարյաց փոքրագույնն է: Ավելի լավ է զրկել անկողնուն գամված կամ տեղաշարժման խնդիրներ ունեցող հաշմանդամների ձայներից, քան թե ընտրախախտումների հավանականությունը մեծացնել:

Ընտրական նոր օրենսգիրքը, համենայն դեպս, հաշմանդամների համար քվեարկության այլընտրանքային տարբերակ չի առաջարկում՝ նրանց զրկելով հայրենի իշխանություններին ընտրելու հաճույքից ու իրենց սահմանադրական իրավունքն իրացնելու հնարավորությունից:

Կ. Դ.

Իրաքահայերի վիճակը ծանր է

1-ին էջից

Բաղդադում կա 6 եկեղեցի, ճիշտ է, ռմբահարության եւ պայթեցվելու վտանգը միշտ կա, սակայն Հայ առաքելական եկեղեցիներն առայժմ անվնաս են: Բաղդադի Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցին քաղաքի կենտրոնում է. պատերազմի առաջին օրերից այն չի բացվել, եկեղեցում ոչ մի ծես չի կատարվել, քանի որ շատ վտանգավոր հատվածում է: Մի փոքրիկ եկեղեցի կա Դանիել Իսքենտերյան ազգային ծերանոցի տարածքում, ուր ուրբաթ եւ կիրակի օրերին ծիսական արարողություններ են կատարվում: Մոսուլ քաղաքում, որը Բաղդադից 400 կմ հյուսիս է, նոր եկեղեցի է կառուցվել, սակայն վտանգի պատճառով դեռեւս չի օծվել: Տեր Գարեգինն ասաց, որ Բաղդադի հայկական փակ գերեզմանատանն արգելված է թաղումներ կատարել, 15 կմ հեռու գտնվող նոր գերեզմանատուն հասնելն էլ վտանգավոր է, մարդիկ ստիպված հին ու փակ գերեզմանատանն են կազմակերպում թաղումները:

Ընդհանուր առմամբ Իրաքում մոտ 20000 հայ կա, որոնցից 250-ական ընտանիքներ Բասրայում եւ Մոսուլում են, 140 ընտանիք Զախոյում, 110 ընտանիք Քիրքուքում, 60 ընտանիք Ալզրում: «Շատերը հնարավորության դեպքում փախել են Սիրիա, շատերն էլ ուզում են Հայաստան գալ, բայց լինել Հայաստանում առանց աշխատանքի եւ առանց բնակարանային պայմանների, փախստականի կարգավիճակով, այնքան էլ գայթակղիչ հեռանկար չէ», ասում է հոգեւոր հովիվը:

Բաղդադում արաբները սպանել են հինգ-վեց հայի, որոնք փորձել են աշխատել կոալիցիոն ուժերի ղեկավարության ներքո: «Ահաբեկչությունը տարբեր դրսեւորումներ ունի, շատերին առեւանգում են, մեծ փրկագին պահանջում, հետո բաց թողնում: Մասնավորապես՝ Լեւոն անունով մի տղայի, որ ոսկերիչ էր, առեւանգեցին, այնքան ծեծեցին, որ մահացավ», պատմեց Տեր Գարեգինը:

Պատանդ հայերի քանակը 10-ից ավել է, 2 հոգի Մոսուլից են, մյուսները՝ Բաղդադից: Հայկական դպրոցներն անապահով են, մարդիկ ստիպված երեխաներին արաբական դպրոցներ են տանում: Հայկական դեսպանատունը Բաղդադում փակվել է դեռ պատերազմի սկզբին, ժողովուրդը ցիրուցան է, անկազմակերպ: Երկրում օրինականության եւ անվտանգության համակարգ փաստացի չի գործում, իսկ ոստիկանությունն ինքն ահաբեկված է, քանի որ ահաբեկիչները ոչնչացնում են բոլոր նրանց, ովքեր հանդես են գալիս կոալիցիոն ուժերի անունից:

«Իրաքահայերն անպաշտպան են Իրաքի բնակչության պես, ասաց Տեր Գարեգինը: Մինչեւ 4 ամիս առաջ սննդօգնություն գալիս էր քրիստոնյա եկեղեցիների կողմից, բացի այդ կար նաեւ 1991 թվականից մինչ հիմա գործող պետական սննդօգնությունը: Այսօր կյանքի ապահովություն նույնիսկ չկա»: Նա հավաստիացնում է, որ Սադդամի ժամանակ հայերն անվտանգ էին: Հիմա մարդիկ անգործ են: Ճիշտ է, շուկաներ կան աշխատող, սակայն ամեն տեղ չէ, որ անվտանգ է: Հիվանդանոցներն աշխատում են, սակայն հոսանք ժամերով չի լինում: Լավ մասնագետները փախել են, համեմատաբար աղքատներն են մնացել, որոնք մի կողմից փախստական դառնալ չեն ուզում, մյուս կողմից էլ իրենց երկրում են անապահով:

Տեր Գարեգինն ասաց, որ սահմանը բաց է, դրսից եկող ահաբեկչական ուժերը միանում են Սադդամի գաղտնի բաժնի զինվորականներին եւ ծանր ու վտանգավոր իրավիճակ ստեղծում Իրաքի ժողովրդի համար:

Իրաքահայերը հայրենիքից օժանդակության ակնկալիք ունեն: Տեր Գարեգինը որպես թեմի ամենատարեց ներկայացուցիչ Բաղդադի առաջնորդ Ավագ արք. Ասատրյանի կողմից եկել է Հայաստան, հանդիպել ԱԺ արտաքին կապերի հանձնաժողովի մի շարք պատգամավորների հետ, ներկայացրել իրավիճակը, հանդիպել վեհափառին:

Երեկ հանրապետության վարչապետ Անդրանիկ Մարգարյանը լրագրողների այն հարցին, թե նա ինչպես է վերաբերվում իրաքահայերին օժանդակելու հորդորներին, պատասխանել է, որ այդ հորդորներն իրենք կարող են լսել, սակայն կա նաեւ պետության շահը: «Եթե հորդորները չեն խանգարում մեր պետական քաղաքական շահերին, այդ հորդորները մենք անպայման կլսենք», ասել է վարչապետը:

«ԱԶԳ»

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետութեան 47
ֆաքս 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենեակ / հեռ. 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն / հեռ. 529353
Համակարգչային շարուածք
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Ազատագրված տարածքները զավթել են գեներալները

Ժիրայր Սեֆիլյան. ԼՂ-ում եւ հարակից շրջաններում վերաբնակեցման ծրագիր գոյություն չունի

«Ազատագրված տարածքների պաշտպանություն» նախաձեռնության համակարգող, արցախյան պատերազմի ակտիվ մասնակից Ժիրայր Սեֆիլյանը պնդում է, որ ԼՂ-ում եւ հարակից շրջաններում վերաբնակեցման ծրագիր գոյություն չունի: Երեկ Մամուլի ազգային ակումբում Սեֆիլյանն անընդունելի համարեց իշխանությունների գործելաոճը, ըստ որի մի քանի գեներալներ հազարավոր հեկտարների են տիրացել, իսկ ազատագրված տարածքներ մեկնող հայ ընտանիքները փորձում են մի կտոր հաց գտնել: Սեֆիլյանը հարկ չհամարեց նշել այն գեներալների անունները, ովքեր, նրա խոսքերով, հազարավոր հեկտարների են տիրացել:

Սերժ Ամիրխանյանը ԼՂՀ կառավարությանն առընթեր միգրացիայի, փախստականների եւ վերաբնակեցման վարչության պետն է: Նա համաձայն չէ Սեֆիլյանի տեսակետներին եւ բերում է հակափաստարկներ: «(Այդ տարածքներում) անմշակ տարածքներ չկան եւ միայն գեներալները չեն, որ ունեն հողեր: (ԼՂ-ից) Հարավային ուղղությամբ «Ֆրանկ Մյուլլերն» ունի մեծ տարածք, Լուսակերտի թռչնաբուծարանը՝ 3 հազար հեկտար եգիպտացորենի դաշտ», ասաց Ամիրխանյանը:

«Մեզ համար սահմանափակում չկա, բոլոր հողերը ենթակա են վերաբնակեցման եւ մշակման: 2002 թ. վերաբնակեցրել ենք 105 ընտանիք, 2003-ին՝ 165 կամ 650 շունչ: Այս տարվա ինն ամիսներին վերաբնակեցրել ենք 160-ից ավելի ընտանիք եւ մինչեւ տարեվերջ փորձելու ենք այդ թիվը հասցնել 200-ի», ասաց Ամիրխանյանը՝ նկատելով, որ վերաբնակեցման դինամիկան տարեկան աճում է 30-35 տոկոսով:

ԼՂՀ կառավարությունն ունի վերաբնակեցման ծրագիր, ըստ որի 2001-2010 թթ. վերաբնակիչների թիվը պետք է հասցվի 68 հազարի: Ամիրխանյանն ասում է, որ ծրագիրն ընդգրկում է ԼՂՀ բոլոր շրջանները, մասնավորապես հյուսիսարեւելյան գոտին: Սակայն, մյուս կողմից, այդ ծրագրին արժե մոտ 110 մլն դոլար, մինչդեռ պետբյուջեով տարեկան տրամադրվում է 440 մլն դրամ, այսինքն՝ եթե միայն պետբյուջեի հատկացումները լինեն, ապա տասնամյա ծրագիրը կիրականացվի 110-120 տարում: Նկատենք, որ վերաբնակեցման անցնող տասը տարիներին (1994-2004 թթ.) Արցախում եւ հարակից տարածքներում վերաբնակեցվել է մոտ 23 հազար մարդ, վերականգնվել է 150 բնակավայր:

Վերջին շրջանում մամուլում կրկին ակտիվորեն շրջանառվում է ղարաբաղյան ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքները վերադարձնելու հավանականությունը: Ժիրայր Սեֆիլյանն ասում է, որ 1994 թ. ի վեր Հայաստանի իշխանություններն ազատագրված տարածքներն օգտագործում են բանակցություններում «բազարի» նպատակով: Սեֆիլյանի կարծիքով, Թուրքիային եւ Արեւմուտքին չի հետաքրքրում, թե ով է վերահսկում Արցախը: «Խնդիրը վերաբերում է Արախի հովտի վերահսկողությանը, ով հսկի այդ տարածքը, նա էլ կվերահսկի ամբողջ Կովկասը», ասում է նա: Սա Թուրքիային է հետաքրքրում, եւ նրանք են աշխատում տիրանալ Արախի հովտին, կարծում է Սեֆիլյանը:

Սերժ Ամիրխանյանը փաստում է, որ հնարավորության սահմաններում վերաբնակեցվում է նաեւ Արախի հովիտը: Մասնավորապես, այսօրվա դրությամբ Զանգելանում բնակություն է հաստատել 130 ընտանիք, Ջեբրայիլում՝ 70: Վերոնշյալ բնակավայրերից ավելի հարավ, ըստ Ամիրխանյանի, այս տարվա ծրագրով մեկ այլ բնակավայր պետք է հիմնադրվի 20 ընտանիքներով: ԼՂՀ միգրացիայի, փախստականների եւ վերաբնակեցման վարչության պետն ասում է, որ այսօրվա դրությամբ 700-800 ընտանիքներ ցուցակում են եւ ցանկանում են վերաբնակվել, սակայն կառավարության միջոցները թույլ են տալիս տարեկան բնավորել միայն 200 ընտանիքի:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ԿԱՊԵՐ

Թաիլանդյան կրթաթոշակ ու փոխանակման ծրագրեր հայ ուսանողների համար

Թողնենք երկիր, երթանք ... Թաիլանդ

Երեւանում է Բանգկոկի 200-ամյա համալսարանի դասախոս տիկին Ամարա Սոնտորդրադան: Հայտնի է, որ Թաիլանդի պառլամենտի եւ մեր պառլամենտականների միջեւ բարեկամական հարաբերություններ են ստեղծվել: Այս ամռանը թաիլանդցիներն այցելեցին Երեւան եւ համագործակցության պայմանավորվածություններ եղան գյուղատնտեսական մի շարք ծրագրերի շուրջ:

Թաիլանդը հայտնի է բարձրորակ գինու արտադրությամբ, տիկին Ամարայի բնորոշմամբ, իրենց յուրահատուկ արեւի ու ջրի շնորհիվ: Որոշվել է հայկական խաղողի տեսակներից եւս արտահանել այստեղ՝ դարձյալ գինու արտադրության համար: Բիզնես ծրագրեր են մշակվում նաեւ ոսկերչության ասպարեզում կապեր հաստատելու համար:

Այս անգամ տիկնոջ այցի նպատակն այլ է՝ հայերի հետ համագործակցել գիտակրթական ասպարեզում: Առայժմ նրանք նախատեսում են իրագործել ուսանողների փոխանակության ծրագրեր, թաիլանդյան կրթաթոշակներ շնորհել հայ ուսանողներին: Տիկինը դասախոսություններով հանդես կգա մեր բուհերում, մտադիր է ուսումնասիրել մեր կրթագիտական փորձը:

Թաիլանդը Հարավային Կովկասի տարածաշրջանում համագործակցում է միայն Հայաստանի հետ, իսկ նախկին ԱՊՀ երկրներից՝ միայն Ղազախստանի ու Տաջիկստանի:

Հեռավոր Թաիլանդի ու Հայաստանի միջեւ բարեկամության հաստատման կնքահայրը հայազգի մեծահարուստ Բոբն է (հանրահայտ է այս անունով), որը Թաիլանդի շինարարական բիզնեսի գլխավոր դեմքերից է, եթե ոչ առաջինը:

Առաջիկայում մեր հայրենի պառլամենտականները մեկնելու են Թաիլանդ՝ կոնկրետացնելու ե՛ւ բիզնեսի, ե՛ւ գիտակրթական պայմանավորվածությունները:

Կ. Գ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Վարչությունը պատկանում է կառավարության աշխատակազմի՞ն, թե՞ կառավարությանը

«Ձեր օրաթերթը պարբերաբար թյուր կամ հապճեպության հետեւանքով առաջացող սխալ տեղեկություններ է տպագրում մասնավորապես ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի վարչությանն առնչվող նյութերում: Մասնավորապես, 2004 թվականի սեպտեմբերի 25-ի «Մի բուռ ցորենի հետքերով» հոդվածում սխալ է տպագրվել վարչության պետի անունը /**Խառատյան** Հրանուշի փոխարեն՝ Հակոբյան Հրանուշ: Իմ համեստ անձը ոչ մի հավակնություն չունի Ազգային եռակի-քառակի պատգամավոր Հրանուշ Հակոբյանի **հայրենանվեր** գործունեությունը յուրացնելու/, նույն հոդվածում վարչությանը վերագրվել է ավելի բարձր կարգավիճակ. այն բարձրացվել է «ՀՀ կառավարությանն առընթեր...» վարչության կարգավիճակի: Սեպտեմբերի 27-ին մենք հեռախոսով տեղեկացրել ենք օրաթերթի պատասխանատուներին հիշյալ անճշտությունների մասին, սակայն չհասցրինք ուշքի գալ, երբ սեպտեմբերի 28-ի համարում «Հայաստանի ազգային փոքրամասնությունների գերակշիռ մասի մայրենի լեզուն ռուսերենն է» հոդվածում անակնկալ հաղորդում տեսանք այն մասին, որ «կրթության նախարարության **օպտիմալացման** ծրագրով գյուղական բնակավայրերում փակվել են ազգային փոքրամասնությունների 16 դպրոցներ: Վարչությունը դիմել է կառավարությանը եւս մի քանի դպրոց ընդգրկելու այդ ցանկում, որովհետեւ աշակերտների թիվը չափազանց քիչ է»: Նույն հոդվածում դարձյալ սխալ է տպագրվել վարչության կարգավիճակը: Այս անգամ այն դարձել է «կառավարության աշխատակազմին կից»:

Բարեբախտաբար իմ ելույթի տեքստը գրավոր էր, ուստի ես հնարավորություն ունեմ ուղարկել ելույթի այդ հատվածը. «Հայաստանում կրթության օպտիմիզացիայի ընթացքը հարցականի տակ է դնում այն դպրոցների ճակատագիրը, որտեղ աշակերտների թիվը շատ քիչ է: Այդ դպրոցների շարքում են հայտնվել նաեւ որոշ ազգային փոքրամասնությունների բնակավայրերի դպրոցները, որոնցում սովորող աշակերտների թիվը տատանվում է 30-100 աշակերտի միջեւ: Մտահոգված լինելով այդ համայնքների կրթության հեռանկարով, ՀՀ կառավարության 25 օգոստոսի 2001 թ. թիվ 773 որոշումով կազմվել է այն հանրակրթական դպրոցների ցանկը, որոնց հանդեպ կիրառվում է աշակերտների թվից անկախ ֆինանսական սկզբունքը: Այդ ցանկում մասնավորապես ընդգրկված են նաեւ եզդիներով, քրդերով բնակեցված կամ նրանց համեմատաբար զգալի թիվ ներկայացնող որոշ բնակավայրերի հանրակրթական դպրոցներ:

Հարգանքով՝ ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի վարչության պետ **Հրանուշ Խառատյան**»:

Խմբագրության կողմից - *Զարմանալի է, որ տկն Խառատյանի ղեկավարած վարչությունն իր իսկ անվանումը ստույգ չիմանալով՝ բողոքում է մեր թերթից: Ուրեմն, նախ տեղեկացնենք, որ կառավարության ինտերնետային պաշտոնական էջում վարչությունը նշվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկների ցանկում, որտեղ վարչության անվան վրա նշելիս բացվում է հետեւյալ՝ «ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների եւ կրոնական հարցերի վարչություն» էջը: Իսկ տկն Խառատյանի նշած անվանումը վերլուծելիս ստացվում է, որ կառավարության աշխատակազմն ունի ազգային ու կրոնական փոքրամասնություններ՝ եզդիներ, հրեաներ, ասորիներ, Եհովայի վկաներ, որոնց վարչության պետը տկն Խառատյանն է:*

Ցավոք, մեր թղթակցի ձայնագրությունը չէր պահպանել տկն Խառատյանի բանավոր ելույթը գրավորի հետ համեմատելու համար: Համենայն դեպս, գրավոր տեքստից պարզ է, որ այստեղ թյուրիմացության պատճառ է դարձել «օպտիմիզացիայի» բառը, որովհետեւ այդ ծրագրով դպրոցներ փակվեցին եւ ոչ թե ավելացան նորերը:

Խմբագրությանը ուղարկված հերքման մեջ տեղ գտած սխալները պահպանեցինք, որպեսզի նոր դժգոհության տեղիք չտանք:

ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

Սպանություն

Ինչպես տեղեկացանք ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի եւ լրատվության վարչության տրամադրած օպերատիվ տեղեկագրից, սեպտեմբերի 28-ին ոստիկանության Աշտարակի բաժին հիվանդանոցից հաղորդվել է, որ կրծքավանդակի մասում սուր կտրող-ծակող գործիքից ստացած վնասվածքի հետեւանքով իրենց մոտ է տեղափոխվել Արսեն Շահինյանի դիակը: Ոստիկանության աշխատակիցները սպանություն կատարելու կասկածանքով բերման են ենթարկել 1967 թ. ծնված Արամայիս Մելքոնյանին: Վերջինս, նույն օրն իր տանը վիճաբանելով Արսեն Շահինյանի հետ, դանակով հարվածել է նրա կրծքավանդակին: Արսեն Շահինյանը հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին մահացել է: Արամայիս Մելքոնյանը ձերբակալված է, քննությունը վարում է դատախազությունը:

Դանակահարություն

Սեպտեմբերի 28-ին ոստիկանության Մասիսի բաժին հիվանդանոցից հաղորդվել է, որ ազդրի մասում ստացած կտրած-ծակած վնասվածքով իրենց մոտ է տեղափոխվել Կարինե Ն.-ն: Մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով ոստիկանության բաժին բերման են ենթարկել 1936 թ. ծնված, նախկինում դատված Սերյոժա Գ.-ին: Վերջինս նույն օրը Կարինե Ն.-ի վարձակալած բնակարանում կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ դանակահարել է Կարինե Ն.-ին՝ պատճառելով մարմնական վնասվածք: Կատարվում է հետաքննություն:

ՄԱՐԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Բնակարաններ փախստականներին

Սեպտեմբերի 28-ին Լոռու մարզի Նոր Խաչակապ եւ Ղուրսալ գյուղերում փախստականների 52 ընտանիքի հանդիսավոր պայմաններում հանձնվեցին երկու եւ մեկ հարկանի նորակառույց առանձնատներ: Նոր Խաչակապի 24, Սարամեջի 1, Ձորաշենի 2 եւ Ղուրսալի 25 ընտանիքների համար տները կառուցվել են փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի ֆինանսավորմամբ: Առաջին երեք համայնքներում շինարարությունն այս տարի երեքնուկես ամսում իրականացրել է Մարտունու «Իշխանհասակ» ՍՊԸ-ն՝ 123 մլն դրամ նախահաշվային արժեքով (Նոր Խաչակապի մեկ ընտանիքի հատկացվել է շինանյութ* բնակարանաշինության համար): Ղուրսալում տների կառուցումն անցյալ տարվանից իրականացրել է «Սպիտակ-1» ԲԲԸ-ն (նախահաշվարկային արժեքը՝ 89 մլն դրամ):

Բացման արարողությանը մասնակցում էին փախստականների հարցերով Նորվեգական խորհրդի հայաստանյան գրասենյակի ղեկավար Թիմ Սթրեյթը, ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի եւ փախստականների վարչության ներկայացուցիչները, Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը: Միգրացիայի եւ փախստականների վարչությունը բնակարանների տերերին հանձնեց հատուկ որոշումներ, որոնց հիման վրա նրանք կարող են մարզպետին դիմում ներկայացնել եւ տներն անվճար սեփականաշնորհել:

Նոր Խաչակապում եւ Ղուրսալում փախստականների ընտանիքներն ապրում են 1988 թ.-ից: 200 տնտեսություն ունեցող Նոր Խաչակապում բնակարանով ապահովված է 150 ընտանիք (ներառյալ նորակառույց առանձնատները): Ղուրսալում, որն ունի 248 տնտեսություն, բնակարանով ապահովված են 75 ընտանիք (նորակառույց առանձնատները ներառյալ): Այս համայնքների մյուս բնակիչներն ապրում են ժամանակավոր կացարաններում:

«Մենք դեռ 90-ականներից էինք սկսել այսպիսի ծրագիր իրականացնել UNHCR-ի (ՄԱԿ-ի՝ փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ) հետ. դա Ստեփանավանում էր,- ասաց Թիմ Սթրեյթը: - Վերջին երկու տարիներին ծրագիրն սկսեցինք իրագործել Սարամեջ, Նոր Խաչակապ, Ձորաշեն եւ Ղուրսալ գյուղերում: Հնարավոր է, որ առաջիկայում, Հայաստանի կառավարության հետ համագործակցելով, շարունակենք բնակարանի կարիք ունեցողներին օժանդակել նման ծրագրերով: Մենք արդյունավետ ենք համագործակցում ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի եւ փախստականների վարչության հետ: Վերջերս ստացանք Հայաստանի ամբողջ տարածքում բնակվող փախստականների ճշգրտված ցուցակը: Ճշտեցինք, թե ովքեր առաջնահերթ կարիք ունեն տուն ստանալու, եւ շարունակելու ենք աշխատել այդ ցուցակով:

Ներառյալ այս տարվա մեր ծրագիրը՝ արդեն շուրջ հազար ընտանիքի համար կարողացել ենք բնակարան ապահովել: Բայց նկատի ունենալով, որ հազարավոր ընտանիքներ դեռ բնակարանի կարիք ունեն, աշխատում ենք ֆինանսավորում գտնել եւ շարունակել ծրագրերը»:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ
Վանաձոր

Երվանդ Զախարյան. Քաղաքապետն ունի բավարար լիազորություններ

Հարցազրույց Երեւանի քաղաքապետ Երվանդ Զախարյանի հետ



- Հարգելի պարոն քաղաքապետ, կցանկանայի մեր զրույցն սկսել Երեւանի զարգացման հեռանկարային, ռազմավարական խնդիրներից: Կարո՞ղ ենք մոտավորապես պատկերացնել, թե ինչպիսին կլինի Երեւանը համեմատաբար մոտ եւ ավելի հեռու ապագայում (ասենք 2020 թվականին):

- Քաղաքի զարգացման ընթացքը որոշվում է նրա գլխավոր հատակագծով: Վերջին անգամ Երեւանի գլխավոր հատակագիծ հաստատվել է 1971 թ.: Այն հնացած էր արդեն իսկ խորհրդային իշխանության վերջին տարիներին, իսկ ԽՍՀՄ փլուզումից հետո հաճախ կառուցվել են շինություններ, որոնք չեն համապատասխանել գլխավոր հատակագծի պահանջներին: Քիչ բացառություններով, այդ ժամանակվա կառուցապատումն իրականացվում էր միանվագ որոշումներով, առանց քաղաքաշինական եւ տնտեսական հիմնավորման:

Ներկայումս 1971 թ. գլխավոր հատակագծի գործողության ժամկետը երկարաձգված է մինչեւ 2006 թ. հունվարը, երբ նախատեսվում է նոր գլխավոր հատակագծի ընդունումը: Այդ նոր հատակագծի մշակումը ավարտական փուլում է, բայց արդեն հիմք է օպերատիվ գործունեության եւ նոր շինարարության տեղաբաշխման համար:

Ըստ նոր գլխավոր հատակագծի, 2020 թ. Երեւանի բնակչության հեռանկարային թիվն ընդունվում է 1 մլն 200 հազար մարդ: (ՌՏ - ըստ 2002 թ. մարդահամարի արդյունքների, Երեւանի բնակչությունը կազմել է 1 մլն 103 հազար մարդ): Քաղաքի զարգացումն ապահովվելու է ներկայիս սահմաններում (22 հազար 700 հա): Ներկայումս կառուցապատման համար պիտանի ազատ տարածքները կազմում են 1500 հա, որոնցից առավել մեծ բաժին ունի Աջափնյակ համայնքը` 700 հա: Կառուցապատման ենթակա են ներկայիս շատ հատվածներ, որոնցում առկա են խարխուլ, կամ սեյսմակայունության չափանիշներին չհամապատասխանող շինություններ:

Ապագայում կառուցապատման համար պիտանի տարածքներ կարող են համարվել նաեւ մասնավոր գյուղատնտեսական նշանակության հողատարածքները (հիմնականում Շենգավիթ եւ Մալաթիա-Սեբաստիա համայնքներում), որոնց օգտագործումը գյուղատնտեսական նպատակներով անցանկալի է, դրանք հիմա էլ աղտոտված են ծանր մետաղներով եւ այլն:

- Բայց առայժմ երեւում են միայն քաղաքի կենտրոնի խոշոր կառուցապատման ծրագրերը:

- Այո, Հյուսիսային պողոտայի եւ հիմա էլ Գլխավոր պողոտայի: Հյուսիսային պողոտայի տարածքների իրացումը գործնականում ավարտվել է, շինարարական աշխատանքներն ընթանում են մեծ թափով: Այս ծրագրի նախաձեռնումը լուրջ, նույնիսկ ռիսկով հղի ձեռնարկ էր, եւ պետք է արժանին հատուցել հանրապետության նախագահին, որ ձեռնարկեց այդ գործը: Աշխատանքներն ընթանում են նախագծային ծրագրերին համապատասխան: Բացի քաղաքաշինական խնդիր լուծելուց, այս ծրագիրը հնարավորություն տվեց քաղաքի բնակիչների մի մեծ խմբի (իսկ այդ մասում ապրում էր ավելի քան 500 ընտանիք) բարելավելու իրենց սոցիալական եւ բնակարանային պայմանները (շնորհիվ նրանց ստացած փոխհատուցման): Բնականաբար, այս ծրագիրը խթանեց գործարար ակտիվությունը, ստեղծեց բազմաթիվ նոր աշխատատեղեր: Իսկ ամենակարեւորն այն է, որ կառուցապատման այս ծրագիրը գրավեց մասնավոր ներդրողների: Եթե Հյուսիսային պողոտայի տարածքների իրացման աճուրդներում մեկ քառակուսի մետրի սկզբնական գինը տատանվում էր 200-300 ԱՄՆ դոլարի սահմաններում, ապա ներկայումս գլխավոր պողոտայի իրացման ընթացքում նրանք համաձայն են վճարել մինչեւ 800-1000 դոլար: Դրա շնորհիվ գլխավոր պողոտայի տարածքում ինժեներական կոմունիկացիաների կառուցումը եւ ասֆալտապատումը կկատարվի մասնավոր ներդրողների հաշվին, մինչդեռ Հյուսիսային պողոտայի դեպքում պետությունը հարկադրված եղավ այդ նպատակներով լրացուցիչ ծախսեր կատարել: Հետագայում նախատեսվում է նմանօրինակ կառուցապատում նաեւ քաղաքի կենտրոնի այլ մասերում` Կոնդում, Գրիգոր Լուսավորչի տաճարի եւ Ֆիրդուսու փողոցի մերձակայքում: Հիմնավոր վերակառուցման կենթարկվի գինու գործարանին հարող տարածքը:

- Ճիշտ ժամանակն է խոսելու տրանսպորտի մասին:

- Տրանսպորտն անկասկած քաղաքի ամենացավոտ խնդիրն է: Ես համոզված եմ, որ եթե լուրջ միջոցներ չձեռնարկվեն, երեք-չորս տարի հետո քաղաքը բառացիորեն կխեղդվի տրանսպորտի օրեցօր աճող հոսքի մեջ:

Առաջին միջոցառումը, որ մենք նախատեսում ենք, երթուղային տաքսիների քանակի կրճատումն է: Մոտակա երեք տարիներին մենք նախատեսում ենք ձեռք բերել 400 ավտոբուս եւ աստիճանաբար դուրս մղել երթուղային տաքսիները, հատկապես քաղաքի կենտրոնական մասից: Դրանք կլինեն նոր ավտոբուսներ` «Բոգդան» տեսակի:

- Բայց ասվում էր, որ այդ ավտոբուսները շահութաբեր չեն:

- Ճիշտ է, ներկա ուղեվարձով դրանք շահութաբեր չեն լինի: Ես կարծում եմ, որ պետք է անպայման ավտոբուսի ուղեվարձը բարձրացնել մինչեւ 100 դրամ: Բացի այդ, մենք նախատեսում ենք բերել մեծ ավտոբուսներ` 80 տեղանոց, մինչ այժմ բերվածները 50 տեղանոց էին:

Երկրորդ միջոցառումը, որ մենք նախատեսում ենք, քաղաքի կենտրոնական մասերի բակերում ստորգետնյա ավտոկանգառների կառուցումն է, որտեղ, այլ ոչ թե փողոցում, պետք է կայանվեն ավտոմեքենաները: Իմ օրոք քաղաքի բակերում ամեն տեսակի շինարարություն արգելվել է: Փոխարենը պետք է խթանվի նշված կարգի շինությունների կառուցումը, որոնք չեն խաթարում բակի նորմալ տեսքը եւ չպիտի խանգարեն բնակիչների հանգիստը:

- Ձեր կարծիքով, այդպիսի ավտոկանգառները հրապուրի՞չ կլինե՞ն մասնավոր ներդրողների համար:

- Դժվար թե: Բանն այն է, որ այդ ավտոկանգառների ծախսերը դանդաղ են հատուցվում: Օրինակ, այն ներդրողները, որոնք ձեռք են բերել տարածքներ Հյուսիսային պողոտայում, արդեն «հետ են բերել» իրենց ծախսերը, քանի որ կարողացել են վաճառել դեռ մինչեւ վերջ չկառուցված տների բնակարանները եւ այլ տարածքները: Ավտոկանգառը, որը եկամուտ է ստանում կայանման վարձից, այդքան արագ հատույցում չի կարող բերել: Այդ պատճառով քաղաքապետարանը պետք է գտնի ներդրողներին հրապուրելու այլ ձեւեր:

Փողոցների բեռնաթափման մյուս ուղին քաղաքը շրջանցող նոր ճանապարհների եւ տարբեր հարթությունների վրա տրանսպորտային հանգույցների կառուցումն է, որոնք մարզերից եկող տրանսպորտային միջոցներին հնարավորություն կտան շրջանցելու Երեւանը: Նախատեսվում են նաեւ նոր փողոցներ մայրաքաղաքի ներսում, որոնք կբեռնաթափեն առավել լարված մայրուղիները, օրինակ` նոր ճանապարհ Հաղթանակի այգուց դեպի Մյասնիկյան պողոտա: Այս կարգի ծրագրերից ամենաուշագրավը կլինի Բաղրամյան փողոցի բեռնաթափման նախագիծը, որով Կորյունի փողոցը միացվում է Վաղարշյան փողոցին: Մայրուղու երկարությունը կազմում է 1,7 կմ, որից 1,08 կմ-ը ստորգետնյա է (թունել):

- Դա որքա՞ն կարժենա:

- Ըստ նախնական հաշվարկների, նշված մայրուղու գինը կազմում է 28,5 մլն դոլար: Պետբյուջեն, իհարկե, չի կարող տրամադրել այդքան միջոցներ, մտածում ենք փորձել վարկ ստանալ Համաշխարհային բանկից:

- Շատերն ասում են, որ քաղաքում ավտոմոբիլային երթեւեկության խցանումներն առաջանում են օբյեկտների սխալ տեղադրումից: Օրինակ` կենտրոնի խիտ մասում տեղադրված շինանյութերի խանութը մշտական խցանումների պատճառ է:

- Համաձայն եմ: Մենք ունենք ծրագիր` բոլոր այդպիսի խանութները ավելի հարմար տեղեր տեղափոխելու:

- Խցանումների մեկ ուրիշ պատճառ է երթեւեկության անկանոնությունը: Մի տաքսու վարորդ ինձ ասաց, որ Բաղրամյան փողոցի բոլոր խցանումների պատճառն այն է, որ այնտեղ շատ երեխաների դպրոցներ են բերում ավտոմեքենաներով, որոնք կանգնում են որտեղ պատահի (նույնիսկ երրորդ շարքում): Ըստ տաքսիստի, այդ մեքենաների տերերը այն խավից են, որոնց ավտոտեսուչները վախենում են «ձեռք տալ»:

- Վարորդների կարգապահությունը իրոք շատ ծանր խնդիր է, որին մենք ուշադրություն ենք դարձնում:

- Բայց դուք ունե՞ք դրա համար անհրաժեշտ լիազորություններ: Օրինակ` կարո՞ղ եք կարգադրություններ անել ոստիկանապետին:

- Այո, ես ունեմ բավարար լիազորություններ, եւ այդ ուղղությամբ տարվում են համապատասխան աշխատանքներ:

- Ինչպիսի՞ն է Երեւանի «բյուջեն»: «Բյուջե» բառը ես օգտագործում եմ պայմանականորեն, որովհետեւ Երեւանը ձեւականորեն համայնք չէ եւ բյուջե չունի:

- Այս տարի քաղաքում նախատեսվում է ծախսել 69 մլրդ 754 մլն դրամ: Դրանից 29,14 մլրդ հատկացվում է պետական բյուջեից, 1,15 մլրդ` համաքաղաքային նշանակության ծախսերին ամրագրվող միջոցներն են (օրինակ` նոտարական գրասենյակների վարձեր, հողի վարձակալության վճարներ եւ այլն): 13,14 մլրդ ստացվում է անշարժ գույքի գործառնություններից, այն է` քաղաքում պետական հողերի վաճառքից: Եվս 9,54 մլրդ թաղային համայնքների բյուջեներն են (այդ թվում 3,7 մլրդ` դոտացիա, այսպես կոչված համահարթեցման սկզբունքով): Եվ վերջապես, եւս 16,77 մլրդ ստացվում է այլ աղբյուրներից:

- Եկամուտների եւ ծախսերի նման բարդ կառուցվածքը նորից առաջ է բերում Երեւանի կարգավիճակի մասին հարցը: Դուք կողմնակի՞ց եք դրա փոփոխությանը:

- Որ Երեւանը համարվի մեկ համայնք: Անկասկած, այդ դեպքում նրա կառավարումը շատ կհեշտանա:

- Վերջին հարցը: Քաղաքապետարանը հայտարարել է, որ պետք է վերացնի ապօրինի կառույցները, եւ իրոք դրանցից շատերը վերացվում են: Բայց եւ կան շատերը, որոնք ակնհայտորեն դժվար թե օրինական լինեն (համենայն դեպս, չեն համապատասխանում քաղաքաշինական նորմերին), սակայն շարունակում են գոյատեւել:

- Կա մի հանգամանք, որին շատերը տեղյակ չեն: Շատ դեպքերում կառույցները, որոնք չեն համապատասխանում այս կամ այն նորմին, իրավական տեսանկյունից «ապօրինի» չեն: Այսինքն, առկա են բոլոր տեսակի թույլտվությունները դրանց կառուցման համար: Ու եթե քաղաքապետարանը դրանց քանդման հարց բարձրացնի, տերերը դատարանով կպահանջեն դրամական հատուցում: Ես հույսով եմ, որ մի օր Երեւանը կունենա այնքան հարուստ քաղաքապետարան, որը հնարավորություն կունենա նման նպատակների համար վճարելու: Միայն այդ ժամանակ մենք կկարողանանք քանդել շատ կառույցներ, այդ թվում այնպիսինները, որոնք այլանդակում են քաղաքը:

«ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ»

ԲԱՐՔԵՐ

«Վիագրա՞ն» Հանրապետության հրապարակում

Հանրապետության հրապարակի շրջակա շենքերի բնակիչները (եւ ոչ միայն նրանք) հաճախ են ստիպված փակում դուռ ու լուսամուտ, որպեսզի հրապարակի կենտրոնում տեղադրված գովազդային էկրան-վահանակից անընդհատ լսվող երգ ու երաժշտության աղմուկը չխուժի իրենց տները, աշխատասենյակները, հյուրանոցի համարները: Նման բողոքներով մեզ դիմեցին քաղաքացիներ, մենք էլ փորձեցինք հասկանալ այն մարդկանց, ովքեր մայրաքաղաքի կենտրոնական հրապարակում անպայման որեւէ բան տեղադրելու ցանկությամբ են տառապում:

Հետաքրքրական է` ինչ տրամաբանություն կամ ընդհանրություն կարող է լինել, ասենք, պրոլետարիատի առաջնորդի արձանի, կանաչ գազոնի, խաչի ու ասենք... «Վիագրա» խմբի մեջ: Անհեթեթություն է, չէ՞, որեւէ կապ փնտրել այստեղ: Բայց արի ու տես արձանի տեղը որեւէ կերպ թափուր չի մնում: Բազալտե ամուր պատվանդանով կեղծիքի առաջնորդի արձանի գահավիժումից հետո հրապարակը մեծացավ, տարածքը սկսեց ազատ շնչել: Բայց հանկարծ քրիստոնեության 1700-ամյակի առիթով այդ նույն տեղում վեր խոյացավ խաչը. հետո ժամանակը լրացավ, հանեցին: Հիմա մեկ տարուց ավելի այստեղ տեղադրվել է մեծադիր էկրան-վահանակ եւ հրապարակի վրա օրնիբուն երաժշտական հոլովակներ, ֆիլմերից հատվածներ ու գովազդներ են պտտվում, նույն երգերը` ուղեղ ու նյարդ սղոցող: Նույնիսկ անկախության օրը` սեպտեմբերի 21-ին, առավոտից մինչեւ տոնական միջոցառման սկիզբը հրապարակում թնդում էին «Վիագրայի» աղջիկների բաց հրավերները: «Убей мою подругу» երգը պտտվում ու պտտվում էր հրապարակի շուրջը, մտնում տներն ու աշխատասենյակները, մարդկանց հունից հանում, հետո առժամանակ ընդհատվում էր տեխնիկական մոնտաժողների ձայներից, ապա նորից եթերում «Վիագրայի» մերկանդամ գեղեցկուհիներն էին:

Լավ, որքա՞ն կարելի է մարդկանց ապուշի տեղ դնել, նույն վիճակն է Երեւանի սրճարաններում, տոնավաճառներում, գետնանցումներում, տրանսպորտում, քաղաքը խեղդվում է ցածրաճաշակ երաժշտական աղմուկից: Հնարավոր չէ՞ Հանրապետության հրապարակը, որտեղ տեղակայված են կառավարության, արտգործնախարարության, ֆինանսների նախարարության շենքերը, «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցը, Ազգային պատկերասրահը, որտեղ ավելի հաճախակի է օտարերկրացիների, պաշտոնատար հյուրերի անցուդարձը, զերծ պահել այս համընդհանուր տգիտությունից, գոնե քաղաքի այս հատվածը ենթարկել քաղաքակրթական ընդունված չափանիշներին: Այսօր Երեւանում խախտվում են քաղաքաշինության ամենատարրական կանոնները, այգիները առեւտրավայրերի են վերածվում, վաղուց անտեսվում-արհամարհվում են էկոլոգիական հարցերը, ավերվում է բնությունը, խլվում ամեն թիզ հող, ու այս ամենը ի սեր շահի ու դրամի:

Բոլորս գիտենք հատկապես քաղաքի կենտրոնում տեղադրված գովազդային վահանակների գների մասին: Կարելի է պատկերացնել, թե կենտրոնական հրապարակի ամենաբանուկ, մարդաշատ հատվածում վահանակ-էկրանի գովազդը ինչպիսի գներ կունենա: Բայց մինչեւ ե՞րբ դրամատենչի ու դրամասիրության մոլուցքին պիտի զոհ գնան այս երկիրը, քաղաքը, մարդը վերջապես:

Մ. Բ.

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

Երկակի ստանդարտների քաղաքականությունը շարունակվում է

Վերջին տարիներին ամերիկացի մի շարք պաշտոնական անձնավորություններ քաղաքական նպատակներով այնպիսի հայտարարություններով են հանդես եկել, որ ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս նրանք կորցրել են մարդկանց հարգանքը, վստահությունն ու հավատը:

Սեպտեմբերի սկզբներին պետքարտուղար Քոլին Փաուելը Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեին հայտնեց, որ Միացյալ Նահանգները Սուդանի Դարֆուր շրջանի իրադարձությունները որակում է ցեղասպանություն եւ կոչ անում Միավորված ազգերի կազմակերպությանը շտապ միջոցներ ձեռք առնել: Այնուհետեւ Սպիտակ տունը հրապարակեց նախագահ Բուշի հայտարարությունը, որ Սուդանի բռնությունները հասնում են ցեղասպանության աստիճանի: Ավելին, Մ. Նահանգների Կոնգրեսն ընդունեց մի բանաձեւ, որով Սուդանի կոտորածները համարվում են ցեղասպանություն:

Հետաքրքրական է նկատել, թե ինչպես նախագահ Բուշը, պետքարտուղար Փաուելը եւ կոնգրեսական առաջնորդները, որոնք ամբողջ ուժով խոչընդոտել էին հայերի ցեղասպանության բանաձեւը, այնքան փութաջանորեն այժմ Սուդանի սպանությունները որակում են ցեղասպանություն: Միացյալ Նահանգները փորձեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդով անցկացնել բավականին խիստ մի բանաձեւ այդ դեպքերի առնչությամբ: Բանաձեւն ի վերջո ընդունվեց մեղմացված տարբերակով, հաշվի առնելով Չինաստանի, Ռուսաստանի, Պակիստանի եւ Ալժիրի առարկությունները: ՄԱԿ-ը Սուդանին չմեղադրեց ցեղասպանության մեջ: Փոխարենը որոշում կայացրեց միջազգային հանձնախումբ կազմել՝ պարզելու համար, թե «արդյոք ցեղասպանության գործողություններ տեղի ունեցե՞լ են»:

Թե ինչ հեգնական իրավիճակի մեջ հայտնվեց Մ. Նահանգները, դրանով պարզ է: Սուդանի դեպքում, իր շահերից ելնելով, Վաշինգտոնն սպանությունները նախ որակեց ցեղասպանություն, ապա քվեարկեց հօգուտ մի բանաձեւի, որ դեռ պետք է պարզի՝ ցեղասպանություն կատարվե՞լ է, թե՞ ոչ: Մյուս կողմից, քաղաքական պատեհապաշտական մղումներից դրդված, Մ. Նահանգների պաշտոնական այրերը չեն կամենում ճանաչել Հայոց ցեղասպանությունը, չնայած 20 տարի առաջ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոնֆերանսում երկար քննարկումներից հետո Օսմանյան կառավարության զանգվածային սպանությունները որակվել են ցեղասպանություն:

Նման անբարոյական քաղաքական վարքագիծն, անշուշտ, աննկատ չի անցնում միջազգային հանրության կողմից: Տարբեր երկրների պաշտոնյաներն արդեն իսկ մատնանշել են քաղաքական այն նկատառումները, որ ստիպել են Բուշի վարչակարգին զբաղվել Սուդանի սպանություններով նախագահական ընտրությունների նախօրյակին: Գաղտնիք չէ, որ Մ. Նահանգները տարիներ շարունակ դեմ է եղել Խարթումի իշխանություններին: Նախագահ Քլինթոնը նույնիսկ հրաման էր տվել հրթիռային հարձակում գործել սուդանական մի գործարանի վրա, որն իբր վտանգավոր քիմիական նյութ էր արտադրում: Պարզվեց, որ դա անվնաս դեղորայք էր:

Այս ամենում տխուր փաստն այն է, որ Սուդանում իրոք մարդկային մեծ ողբերգություն է տեղի ունենում, որն արդարացիորեն կարելի է անվանել ցեղասպանություն: Բայց Մ. Նահանգների իրարահաջորդ կառավարություններն իրենց անպատկառ վարքագծով այնքան են անտեսել իրենց բարեկամների վատթարագույն ոճրագործությունները եւ այնքան չարամտորեն դատապարտել իրենց թշնամիների նվազագույն հանցագործությունները, որ աշխարհի առաջ կորցրել են իրենց վստահությունն ու հարգանքը: Մարդիկ այլեւս չեն հավատում նույնիսկ նրանց ճիշտ գնահատումներին:

Վստահությունը, հավատն ու հարգանքը վերականգնելու համար Մ. Նահանգների կառավարությունը պարտավոր է սկզբունքային դիրքորոշում որդեգրել ինչպես իր բարեկամների, այնպես էլ իր թշնամիների հանդեպ:

ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆ

«Կալիֆոռնիա կուրիեր»

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

Վաշինգտոնը խիստ դժգոհ է Բաքվի ռուսամետ քաղաքականությունից

Բաքվի «Զերկալո» թերթի թղթակիցը, որ նոր է վերադարձել Վաշինգտոնից, թերթի երեկվա համարում վկայակոչելով ԱՄՆ պետքարտուղարության մի բարձրաստիճան պաշտոնյայի, գրում է, որ Մ. Նահանգները խիստ դժգոհ է պաշտոնական Բաքվի քաղաքականությունից: Ամերիկացիների տպավորությամբ, Իլհամ Ալիեւը փորձում է իր խաղը խաղալ միաժամանակ եւ ԱՄՆ-ի, եւ Ռուսաստանի հետ: Վաշինգտոնում կարծում են, որ Ադրբեջանը տապալելով ՆԱՏՕ-ի «Լավագույն համատեղ ջանք-2004» զորավարժությունները, ցույց տվեց իր լոյալ կեցվածքը Ռուսաստանի հանդեպ: Մյուս կողմից, պաշտոնյան ասել է, որ Ադրբեջանի տարածքում ամերիկյան շարժական ռազմակայաններ տեղակայելու խնդիրը գործնականում լուծված է:

Չնայած Բաքվի պաշտոնյաների հայտարարություններին, որ ՆԱՏՕ-ի զորավարժությունների չեղյալ հայտարարելը որեւէ կերպ չի ազդելու Ադրբեջանի՝ Հյուսիսատլանտյան դաշինքի եւ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների վրա, «Զերկալոն», վկայակոչելով պետքարտուղարության պաշտոնյային, գրում է, որ Վաշինգտոնում որոշել են Ադրբեջանի հետ պաշտոնական շփումները հասցնել նվազագույնի:

Պաշտոնյայի կարծիքով, այսօր Ադրբեջանում եւ նրա շուրջը տեղի ունեցող իրադարձություններն այնքան էլ չեն հետաքրքրում Վաշինգտոնին: «Մեզ հաջողվել է վճռել երեք կարեւորագույն առաջադրանք: Առաջին՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարի շինարարությունն այլեւս հնարավոր չէ դադարեցնել, երկրորդ՝ Ադրբեջանի տարածքում տեղակայվելու են ամերիկյան շարժական ռազմակայաններ, երրորդ՝ չնայած ՆԱՏՕ-ի զորավարժությունների խափանմանը, իբր հայ զինծառայողների մասնակցության անհնարինության պատճառով, մեզ հաջողվել է ղարաբաղյան ճակատում ռազմական գործողությունների վերսկսման սպառնալիքը հեռացնել», ասել է պաշտոնյան:

Մեր կողմից հիշեցնենք, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 59-րդ նստաշրջանին մասնակցելու նպատակով նախորդ շաբաթ ԱՄՆ ժամանած Իլհամ Ալիեւը չի հանդիպել ԱՄՆ վարչակազմի եւ ոչ մի պաշտոնյայի հետ: Մինչդեռ անգամ խոսվում էր Ալիեւի եւ Բուշի հանդիպման հավանականության մասին:

Մասխադովը շրջափակված է Չեչնիայի լեռներում

Սաակաշվիլի. «Չեչեն գրոհայինները Վրաստանի բարեկամները չեն»

Չեչեն հայտնի անջատական, Չեչնիայի նախկին նախագահ Ասլան Մասխադովը ներկայումս այն ելուզակախմբի կազմում է, որը շրջափակված է Չեչնիայի Նոժայ Յուրտի, Վեդենոյի եւ Կուրչալոյի շրջանների կցատեղում: Այդ մասին երեկ հեռախոսով ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնել է Նոժայ Յուրտի շրջանի վարչակազմի ղեկավար Վախա Մագոմգազիեւը:

Տվյալ հետեւությունն արվել է օպերատիվ տվյալների հիման վրա, քանզի գրոհայինների ռադիոեթերում կանոնավորապես հնչում են Մասխադովի մերձավորների ազգանունները:

Չեչնիայի հարավարեւելյան անտառապատ շրջաններում վերջին 3 օրերին ելուզակային խմբավորումներից մեկի ոչնչացման գործողություն է անցկացվում: Գրոհայինները շրջափակված են Գանսոլ Չու եւ Մեսկետի գյուղերի մոտակայքում: Մագոմգազիեւի տվյալներով, Չեչնիայի ՆԳՆ ստորաբաժանումների հետ տեղի ունեցած բախումների ընթացքում ելուզակները զգալի կորուստներ են կրել: Ըստ որոշ տվյալների, սպանվել է 23 գրոհային: Միլիցիայի շարքերում եւս կան կորուստներ. 5 սպանված, 10 վիրավոր:

Իսկ Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլին երեքշաբթի օրը մամլո ասուլիսում հայտարարել է, թե չեչեն գրոհայինները Վրաստանի բարեկամները չեն: «Չեչեն դաշտային հրամանատարների մեծ մասի ձեռքերը թաթախված են Աբխազիայի վրաց բնակչության արյան մեջ: Այնպես որ, այդ մարդիկ մեր բարեկամները չեն: Թող Աստված մեզ ազատի նման բարեկամներից, իսկ թշնամիներից ինքներս կազատվենք», ասել է Սաակաշվիլին:

Այս խոսքերը նրա պատասխանն են օգոստոսի վերջերին Ասլան Մասխադովի արած մի հայտարարության առթիվ: Վրացական «Մզե» հեռուստաալիքով ցուցադրված տեսագրության մեջ Մասխադովը հայտարարել էր, որ Վրաստանի իշխանությունները դեմ չեն իրենց երկրի տարածքում չեչեն գաղթականների ներկայությանը եւ նույնիսկ օգնում են նրանց:

Միխայիլ Սաակաշվիլին ՌԻԱ գործակալության թղթակցին ասել է, թե Վրաստանը պատրաստ է Ռուսաստանի հետ գործակցել հակաահաբեկչական պայքարում: «Այդ պայքարում մենք Ռուսաստանի հատուկ ծառայություններից որեւէ գաղտնիք չունենք», հավաստիացրել է Վրաստանի նախագահը:

Սորոսը հավելյալ 2-3 մլն կհատկացնի Բուշի դեմ ուղղված պայքարին

Ամերիկացի միլիարդատեր Ջորջ Սորոսը, որը հայտնի է ամբողջ աշխարհում կրթական եւ այլ ծրագրերի ֆինանսավորմամբ, մտադիր է հավելյալ 2-3 մլն դոլար հատկացնել ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի դեմ ուղղված նախընտրական քարոզչությանը:

Սորոսը Բուշի քաղաքականության մոլի հակառակորդներից է եւ նախագահական ընտրություններից առաջ ֆինանսավորում է Բուշի դեմ ուղղված զանազան ձեռնարկումներ: Ասոշիեյթեդ պրես գործակալության տվյալներով, Սորոսն այդ նպատակով արդեն ծախսել է 18 մլն դոլար: Մասնավորապես նրա փողերով ստեղծվել են «America Coming Together» եւ «MoveOn.org» կազմակերպությունները, որոնք ԱՄՆ հասարակայնությանը ծանոթացնում են Սորոսի տեսակետներին:

Այդ կազմակերպությունները տարածում են թռուցիկներ եւ քարոզչական այլ նյութեր, ԶԼՄ-ներում հրապարակում գովազդներ, իսկ ամերիկյան 3 հայտնի երգչուհիներ Սորոսի փողերով ձայնագրել են Բուշին խարազանող մի երգ: Տվյալ բոլոր հանրային ձեռնարկումների մասնակիցները պաշտոնապես որեւէ կապ չունեն Բուշի ախոյանի՝ դեմոկրատների թեկնածու Ջոն Քերիի նախընտրական շտաբի հետ:

Ջորջ Սորոսի կարծիքով, նախագահ Բուշի քաղաքականությունը հակասում է իր իսկ հռչակած «բաց հասարակության» հայեցակարգին: Միլիարդատերը մասնավորապես դատապարտում է Իրաքում Բուշի սանձազերծած պատերազմը: «Ուոլ Սթրիթ ջորնըլ» թերթում երեկ գովազդի իրավունքով հրապարակված հոդվածում Սորոսն ամերիկացիներին պարզաբանում է, թե նրանք ինչու չպետք է Բուշին վերընտրեն նախագահի պաշտոնում:

«Նյու Յորք թայմսը» դատի է տվել ԱՄՆ գլխավոր դատախազին

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը տեղեկացնում է, որ «Նյու Յորք թայմս» ազդեցիկ օրաթերթը երեքշաբթի օրը դատական հայց է ներկայացրել ընդդեմ ԱՄՆ գլխավոր դատախազ Ջոն Էշկրոֆթի:

Մանհեթենի շրջանային դատարան ներկայացված հայցում նշվում է, որ Էշկրոֆթի գլխավորած արդարադատության նախարարությունը պահանջել է թերթի երկու լրագրողների եւ նրանց աղբյուրների ունեցած հեռախոսազրույցների ձայնագրությունները: «Նյու Յորք թայմսը» դատարանին խնդրում է միջամտել եւ խոչընդոտել նախարարության գործողություններին:

Լրագրողներին տեղեկություններ հայտնած պետական ծառայողների բացահայտման նպատակով արդարադատության նախարարությունը պահանջել է լրագրողներ Ֆիլիպ Շենոնի եւ Ջուդիթ Միլլերի՝ 2001 թ. սեպտեմբերի 11-ի եւ հետագա 20 օրերի հեռախոսազրույցների ձայնագրությունները:

«Նյու Յորք թայմսի» հայցում նշվում է, որ եթե նախարարությունն ստանա այդ ձայնագրությունները, ապա հայտնի կդառնան թերթի տասնյակ գաղտնի աղբյուրներ, որոնք նյութեր են տրամադրել սեպտեմբերի 11-ի իրադարձությունների, «Ալ Ղաիդայի» սպառնալիքների առթիվ ԱՄՆ իշխանությունների արձագանքի եւ Իրաքի պատերազմի վերաբերյալ:

Թերթի փաստաբան Ջորջ Ֆրիմենի խոսքերով, այդ աղբյուրների մեծ մասը կապ չունի նախարարության ձեռնարկած քննության հետ: «Մենք խորապես մտահոգ ենք մեր եւ տեղեկատվության աղբյուրների հարաբերություններին այդ կոպիտ միջամտությամբ, որը սահմանադրության խախտում է եւ սպառնալիքի տակ է դնում մամուլի ազատությունը», հայտարարել է Ֆրիմենը:

Լուկաշենկո. «Ինձ անհնար է ընկճել»

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն խստիվ քննադատել է իր վարչակազմի 3 բարձրաստիճան պաշտոնյաների եւ 1 հրամանատարի Եվրոմիության երկրներ մտնելն արգելելու ԵՄ որոշումը: Նախագահը նաեւ նշել է, որ իր դեմ մահափորձ է նախապատրաստվում:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստում ելույթ ունենալով՝ Լուկաշենկոն հայտարարել է, թե Արեւմուտքը չի ստանա հիշյալ 4 պաշտոնյաների «գլուխները»: BBC-ի տվյալներով, խոսքը հատուկ ջոկատներից մեկի հրամանատար, գնդապետ Դմիտրի Պավլիչենկոյի եւ 3 գեներալների մասին է, որոնցից Վիկտոր Շեյմանը Բելառուսի գլխավոր դատախազն է, Վլադիմիր Նաումովը՝ ՆԳ նախարարը, Յուրի Սիվակովը՝ սպորտի եւ զբոսաշրջության նախարարը:

Եվրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովի զեկուցագրում պնդում է արվում, թե այդ 4 անձինք մեղսակից են 1999-2000 թթ. ընդդիմադիր քաղաքական գործիչներ Վիկտոր Գոնչարի, Յուրի Զախարենկոյի, գործարար Անատոլի Կրասովսկու, հեռուստաօպերատոր Դմիտրի Զավադսկու անհետացմանը:

Աթենքի օլիմպիադայի նախօրեին Հունաստանի իշխանությունները հրաժարվել էին մուտքի այցագիր տալ Բելառուսի պատվիրակության ղեկավար Յուրի Սիվակովին, իսկ Եվրոմիությունը պարզաբանել էր, որ նա Եվրոպայում «անցանկալի անձ է», որը թերեւս մեղսակից է Բելառուսում մարդկանց անհետացումներին եւ խոչընդոտում է այդ դեպքերի անաչառ քննությանը:

Միացյալ Եվրոպան այն ժամանակ հիշեցրել էր, որ պաշտոնական Մինսկից սպասում է անկողմնակալ եւ մանրակրկիտ քննություն: ԵՄ վերջին հայտարարության մեջ նշվում է, որ Բելառուսի իշխանություններից պատասխան չի ստացվել:

Լուկաշենկոն իր ելույթում ընդգծել է, որ ինքը հավելյալ տեղեկություններ է ստացել, թե Արեւմուտքը նոր ճնշումներ է նախապատրաստում Բելառուսի դեմ, ընդհուպ երկրի նախագահի ուժային ոչնչացումը: Անվտանգության խորհրդի նիստի մասնակիցներին դիմելով Լուկաշենկոն ասել է. «Արեւմուտքի ղեկավարներին հայտնեք. թող անմիջապես անցնեն այդ կետին, քանզի հակառակ դեպքում չեն կարողանա ինձ ընկճել»:

Կամերային նոր բեմադրության եւ հարակից հարցերի մասին

Վերջերս մեր թատրոններն ասես հակամետ են իրենց «դիմագիծը» խախտելով ժանրային նոր հակումներ դրսեւորել: Մայր թատրոնի անակնկալը ժամանակակից զվարթ ու թեթեւ կատակերգություն էր («Գիշերային խրախճանք»), կամերային թատրոնինը՝ ճիշտ հակառակը, ժամանակակից ինտելեկտուալ դրամա՝ մյուզիքլի ու հանդիսանքայինի ընդգծված հակումով թատրոնի համար անակնկալ, թեեւ արդար լինենք եւ չմոռանանք, որ Արա Երնջակյանի նախասիրությունների մեջ իրեն զգացնել է տվել եւ ինտելեկտուալ դրաման (բավական է հիշենք «Համլետը» եւ «Ներոնի եւ Սենեկայի ժամանակը»): Ս. Ռոնցոնիի «Բեդֆորդ Դրայվ. ես ամերիկացի եմ» պիեսը մեզ հետաքրքրում էր երկու առումով: Նախ, որ այն վերաբերում էր մեր ժողովրդին թանկ ու հարազատ մի մարդու պատրող Վերֆելի յուրահատուկ սկզբունքը հանդիպում է գործարար ամերիկացու գործնական «ռմբահարությանը»: Ասես վերջում, անհավասար մենամարտից, որքան էլ ազնիվ ու արդարացի լինի Վերֆելը, միեւնույն է, պարտվում ու կազմալուծվում է... Նա միայն խնդրում է չաղավաղել պիեսում իր համար թանկ գաղափարը, որին գուցե «սրտի վերջին զարկե՞րն է տվել»... Վերջաբանում Օդեթսը հաղորդում է, որ Վերֆելի պիեսը ձեւեց մեկ ուրիշը, կոչեց իր անունով, որը եւ մեծ հաջողությամբ խաղացվեց, սակայն ոչ նրա վրա Վերֆելի անունը կար, ոչ նրա համար թանկ Ս. Ֆրանցիսկուսի եւ թափառական հրեայի տեսարանը, որին նա «տվել էր իր սրտի վերջին զարկերը...»:

Վերջում լույսի շողը քնքշորեն պարուրում է Վերֆելին, որն ասես նիրհել է՝ եւ ապա, որ պատումի գործողությունն անցնում-դառնում է ընդամենը երկու հոգու միջեւ. մի բան, որ միշտ էլ թատրոնի եւ դերասանի համար վտանգավոր է՝ կաղապարվելու եւ կրկնվելու հանգամանքով: Ակնհայտ է, Արա Երնջակյանը շարունակում է առանց «տեմպը թուլացնելու» անակնկալներ անել, սակայն այս անգամ նա ցուցաբերում է առավելագույն զսպվածություն, խստություն, երկու գործող անձով պատումը ջերմացնելու եւ նրան հուզական լիցք հաղորդելու համար դիմում է միայն հեղինակի ցուցումներին՝ օգտագործելով Վերդիի «Ճակատագրի ուժը» օպերայի որոշ հատվածները:

«Ես ամերիկացի եմ» (այսպես ավելի հարմար է) պիեսը երջանիկ ճակատագիր ունեցավ մեզ մոտ. կարճ ժամանակում ոչ միայն թարգմանվեց (թարգմ՝ Աշոտ Ալեքսանյան), այլեւ հրատարակվեց «Արտասահմանյան գրականության մատենաշարով», թեեւ լեզուն բեմական լինելու համար հարկ կլիներ փոքր-ինչ խմբագրել, որը եւ մասամբ արվել է: Պիեսը պատկերում է Վերֆելի կյանքի վերջին տարին. Լոս Անջելեսի իր տանը, ուր նա տակավին հիվանդ, պառկում էր կնոջ հետ: Նրան այցի է գալիս ամերիկյան ճանաչված մի լրագրող՝ Քլիֆֆորդ Օդեթսը: Զարմանալի բծախնդրությամբ է հեղինակը նկարագրում Օդեթսի հագուկապը. անփայլ ապակիով ակնոցը, 35 դոլարանոց կոստյումը, մաշված օձիքով նուրբ վերնաշապիկը... Թվում է, թե նման բծախնդրության պարագայում Ռոնցոնին գեթ մի փոքր հոգատարություն կցուցաբերեր իր գլխավոր հերոսի՝ Վերֆելի մարդկային եւ գրողական նկարագրի էական կողմերը չանտեսելու հարցին: Դա չի արվել. այդ մասին քիչ հետո, առայժմ այն մասին, թե ինչ ենք տեսնում:

Հավաստի, անբռնազբոս միջավայր, ուր կա սեղան՝ ըմպելիքով ու գավաթներով (տունը սովոր է այցելուների), որից եւ օգտվում է հյուրը՝ մինչ կհայտնվեր տանտերը: Արդեն իսկ բարձրախոսից լսվող տեքստը՝ տեղահանվող ու բնաջնջվող հրեաների մասին գուժում է ժամանակը... Առաջին երկխոսությունից զգացվում է, որ լրագրողը եկել է Վերֆելի մոտ՝ «Գիլդ» թատրոնին տված «Յակոբովսկին եւ գնդապետը» պիեսը վերափոխելու՝ Բրոդվեյի զվարթ թատրոնին հարմարեցնելու համար: Իսկ պիեսը ֆաշիզմի՝ հրեաների տեղահանման ու տառապանքների մասին է... Ինչպե՞ս կարող է բովանդակությունից դուրս ձեւ լինել: Հետեւում են վեճերը, որոնք ստեղծագործական հարցերից վերածվում են քաղաքական, գաղափարական, կրոնական հակամարտության, որն, իհարկե, լուծվում է առավելապես երիտասարդ ու ճարպիկ, ամերիկյան մտածելակերպի լրագրողի, քան կյանք ապրած, տառապած ու իմաստնացած դարի մեծ մարդասերի եւ գրողի օգտին: Դասական սկզբունքներով, հավերժ մարդկային-բարոյականի օրենքներով

աշխարհից հոգնած ու խռոված... Մի պահ լռություն, ապա պայթում են ծափերը: Լավ աշխատանք էր: Ռեժիսորը, որ միաժամանակ նկարիչ-ձեւավորողն էր, բեմի յուրահատուկ թիզն օգտագործել էր, հավաստի միջավայր ստեղծել (երաժշտական ձեւավորումը՝ Վահե Հայրապետյանի): Գրիգոր Բաղդասարյանի անփույթ պահվածքի մեջ հուզիչ համեստություն կա, բարեկրթություն: Զգացվում է, որ երբեմն ինչ-որ բան զիջում է, բայց ավելի շատ նրբամտությունից, տանտիրոջ ներողամտությամբ, բայց երբ խոսքը դառնում է մարդկային խնդրի կամ գեղարվեստական սկզբունքի շուրջը, Բաղդասարյան-Վերֆելն ասես մոռանում է հիվանդությունը եւ ծառս ելած վիճում է, կռվում՝ մինչեւ ուժասպառվելը... Ամբողջ կերպարից բարի ու դրական ինչ-որ լիցքեր են գալիս եւ համակրանքով տոգորում հանդիսատեսին: Միանգամայն հակառակն է Արշալույս Հարությունյանի Օդեթսը: Թեեւ բացասական կերպար չէ, բայց ինքնավստահությունը, իր ու մեծ մարդու եւ գրողի միջեւ միջնորմը չզգալու նկարագիրը, երիտասարդական իր ուժի գիտակցությունը եւ վիճաբանելիս բավականին «ազատ» վարքը մեզ տրամադրում են ավելի քննադատաբար կողմնորոշվելու նրա հանդեպ: Բեմադրիչը ստեղծագործական ազատություն է տվել դերակատարներին, եւ նրանք ճիշտ կատարելով առաջադրված խնդիրները, իրենց բեմական կենսագրությունն ավարտում են՝ ամբողջանալով իբրեւ մարդկային եւ ստեղծագործական անհատներ. սա կարեւոր է:

Երնջակյանը կարողանում է շարակցել առանձին դրվագները, մերթ շիկացնելով ու պրկելով, մերթ մեղմելով ու թուլացնելով, տանում է ավարտի, որն, այնուամենայնիվ, բեմադրիչին հնարավորություն չի տալիս կամ գրեթե չի տալիս լիաձայն հնչեցնելու գլխավոր հերոսի՝ մարդու դեմ գործվող հանցանքի, իր մարդկային-բարոյական գաղափարաբանության ցավոտ պահանջը: Սա հեղինակից եկող վրիպում է, որի ակունքը Վերֆելի կերպարի միակողմանի դիտարկումն է: Բեմադրիչն ու դերակատարները «կաշվից դուրս են գալիս» գլխավոր հերոսի՝ դարի մեծագույն մարդասերներից մեկի վշտին ու տառապանքին համամարդկային հնչեղություն հաղորդելու համար: Սակայն խնդիրը մնում է մեկուսացած, կտրված՝ դարի խոշորագույն իրադարձություններից, որոնցից ոչ մեկի հանդեպ Վերֆելն անտարբեր չի մնացել: Հրեաների հանդեպ ֆաշիզմի բնաջնջման քաղաքականությունը Վերֆելի կյանքի մայրամուտի բողոքն ու ընդվզումն էր, սակայն մինչեւ դա նա ապրել էր դարասկզբի բոլոր փոթորիկները, շատերի պես հույսը կապել 1917 թ. բռնկված հեղափոխության հետ, կոչեր ուղղել ժողովրդին, բանտարկվել, տեւականորեն տառապել խաղաղ մի ժողովրդի դեմ՝ թուրքերի [illegible] ցեղասպանության իրողությամբ, որը եւ նրան հանգիստ չի տվել տարիներ ի վեր: Եվ նա մտել էր Վիեննայի Մխիթարյանների վանքը, երբ տարի շարունակ ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը, հանդիպել Եղեռնից փրկվածների հետ... Այս ամենից հետո սկսել էր գրել «Մուսա լեռան 40 օրը» մեծածավալ վեպը, որը տպագրվեց 1934-ին՝ միանգամից նրան գցելով իշխանության եկած ֆաշիզմի սեւ ցուցակը: Եվրոպացի լուսավոր մարդկանց հետ Վերֆելն էլ կամովին տարագրվեց... Ամբողջ գիտակցական կյանքը Վերֆելը կրել է առաջին ցեղասպանության անմարդկային ու անարդար գիտակցությունն ու այն, որ հրեաների բնաջնջումը շարունակությունն էր անպատասխան թողնված առաջին ցեղասպանության: Ճիշտ է, Ռոնցոնին իր պիեսի նյութը դարձրել է Վերֆելի կյանքի վերջին տարին, սակայն ո՞ր գեղարվեստական երկը կամ կերպարը մեկուսի է ստեղծվում, առանց ամբողջի հետ ունեցած շղթայի... Այստեղից էլ դարի մեծագույն մտածողներից մեկի կերպարի գեղարվեստական անկատարությունը, որ ոչ մի կապ չունի այս բեմադրության վրա թափված արդյունավետ աշխատանքի եւ երկու դերակատարների՝ Գրիգոր Բաղդասարյանի (Վերֆել) եւ Արշալույս Հարությունյանի (Օդեթս) սխրալի ջանքերի հետ: «Հրեան մնում է հրեա». հենց այս պիեսում ասում է Վերֆելը: Նա իր դասն է հնչեցնում եւ իրենից զատ ոչինչ ու ոչ ոքի չի տեսնում: Մեր ցավն էլ մենք պիտի հոգանք: Հրեա ժողովրդի զավակն իր խնդիրն է բարձրացնում, սրում, թեեւ գեթ այսօր ոչ նրա անվտանգությանը, ոչ էլ նույնիսկ գերհեղինակությանը ոչինչ չի սպառնում: Ավելին՝ այս օրերին Ամերիկայից Իրանի դեմ հնչող մեղադրանքներին Իրանը միանգամայն ազնիվ բողոք է բարձրացնում, թե ինչու է մի երկրի (նկատի ունի Իսրայելը) կարելի է միջուկային եւ ամեն կարգի զենք պատրաստել, իսկ մեկ ուրիշին՝ ոչ: Տվյալ դեպքում Իրանն այլ հարց է բարձրացնում՝ ժխտելով միջուկային զենքով իր զբաղվելը: Այս ամենի արդյունքում հրեա ժողովրդի զավակը ջանում է շարունակ պրկված պահել իր ժողովրդին պատճառած անարդար չարիքի լարը:

Իսկ մենք ի՞նչ ենք անում. խրախուսում ենք եւ... բավարարվում դրանով: Ուրիշ հարց է, որ հայ բեմադրիչը տանջագին ելքեր է որոնում՝ ինչ-որ կերպ բարալիկ սողանցք գտնել՝ նաեւ մերը հնչեցնելու: Որքան էլ ազնիվ, այնուհանդերձ, ոչ բոլորովին բավարար միջոց: Եվ ինչո՞ւ ենք պահանջում, որ հրեան հնչեցնի մեր դասը... Որքանո՞վ է դա ողջախոհ: Այս հոդվածի առիթով հարցուփորձեցի գրչի մարդկանց. ո՞վ է նրանցից մտածում մի պիես գրել Վերֆելի՝ դարի ամենադրամատիկ անհատականություններից մեկի մասին... Փառք Աստծո, որ մեկին գտա. Ռուբեն Մարուխյանն է: Մեզ մնում է ամեն կերպ սատարել, որ այդ պիեսն աշխարհ գա եւ բեմ բարձրանա... Գուցե եւ ինչի ա՞յլ լեզուներով: Այն ժամանակ մենք այսքան չենք խեղճանա:

ԱՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՄԵՐ ՄԻՋԻ ՊՈԵՏԸ

Միշել Փոլադյանի հիշատակին



2004 թ. փետրվարին կյանքից անժամանակ հեռացավ գրող, գրականագետ, լեզվաբան, բանասիրության դոկտոր Միշել Փոլադյանը: Ծնվել էր Ֆրանսիայում, 1943 թ., այնուհետեւ 1947 թ. ծնողների հետ տեղափոխվել էր Հայաստան՝ ճաշակելով հայրենադարձության բոլոր զրկանքներն ու դառնությունները: Սովորել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, 1966 թ. վերադարձել Ֆրանսիա: Շարունակելով կրթությունը, Ֆրանսիայում պաշտպանել է գիտական երկու թեզ («Ռուս գրականություն» եւ «Ֆրանսիական ժամանակակից լեզվաբանություն» մասնագիտություններից), որպես պրոֆեսոր դասախոսել է Ֆրանսիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Միշել Փոլադյանը 60-ական թվականների Հայաստանի ավանգարդիստական պոեզիայի աչքի ընկնող ներկայացուցիչներից էր: Նրա բանաստեղծական ժողովածուն իր նորարարական ուղղվածության պատճառով Հայաստանում այդպես էլ չհրատարակվեց, այն լույս տեսավ Փարիզում, ֆրանսերեն, 1975 թ. «Զրույց թռչունների հետ» վերնագրով: Միակ գրքույկը, որը նա կարողացավ այդ տարիներին հրատարակել Հայաստանում, մեծ դժվարությամբ լույս տեսած Ֆ. Վիյոնի բանաստեղծությունների բարձրարժեք թարգմանությունն էր: Ֆրանսերեն լեզվի եւ ֆրանսիական դասական ու ժամանակակից պոեզիայի խոր իմացությամբ նա դրականորեն նպաստեց ժամանակի հայ բանաստեղծական արվեստի զարգացմանը:

1977 թ. Միշել Փոլադյանը 31 տարվա բացակայությունից հետո վերադարձավ Հայաստան եւ որպես պրոֆեսոր սկսեց դասախոսել Երեւանի տարբեր համալսարաններում (ԵՊՀ, Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան, «Հր. Աճառյան» համալսարան): Նա դասավանդում էր լեզվաբանություն եւ ոճագիտություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով գրական տեքստերի վերլուծության վրա: Նկատի առնելով ֆրանսիական լեզվաբանության ու գրականագիտության նորագույն տեսությունները, նա հայ եւ համաշխարհային գրական ստեղծագործությունները դիտում էր իբրեւ ամբողջական երեւույթ, իմաստային եւ լեզվական կոնկրետ կառուցվածք, որին չի կարելի մոտենալ նրա առանձին հարաբերությունների տարբերակման տեսանկյունից՝ վերլուծության մեջ ներգրավելով նաեւ ընթերցողի ընկալման փորձը, որպես տեքստի համահեղինակ անձ: «Քննադատել, այսօր, նշանակում է տիրապետել զանազան բնագավառների», գրում է նա: Ֆրանսիացի լեզվաբան, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Ժ. Մոլինեն գրում է. «Միշել Փոլադյանի ստեղծած համակարգը ցույց է տալիս նրա ինքնատիպ միտքը՝ գրավիչ եւ սրտաբաց» եւ որ՝ «Միշել Փոլադյանը, անկասկած, արտակարգ մտքի մարդ է»:

1997-2001 թթ. Երեւանում եղած ժամանակ Միշել Փոլադյանը կատարեց մեծ աշխատանք՝ հայերենով, ռուսերենով, ֆրանսերենով հրատարակելով գիտական հետազոտությունների յոթ ժողովածու («Լեզու եւ գրականություն», «Խոսքի վերադարձը», «Ժամանակ, տարածք, անձ», «Մաշոց, խորենացի» եւ այլն:

2001 թ. Միշել Փոլադյանը վերադարձավ Ֆրանսիա, շարունակելով իր գիտական լայն ծրագրերի իրագործումը, բայց, ավաղ, տաղանդավոր եւ բազմաշնորհ ստեղծագործողը եւ մտածողը կյանքից հեռացավ իր ուժերի ծաղկման շրջանում:

Այն բաց տեղը, որ նա թողեց իրենից հետո, միշտ բաց կմնա, թեեւ իր խոսքերով ասած՝ «Կարեւորը գիրքն է, իսկ գիրքը դեռ կենդանի է»:

Մ. Բ.

Ռուբեն Մամուլյանի հիշատակին

Հոլիվուդյան կինոյի եւ թատրոնի լեգենդ հռչակված եւ միջազգային համբավի արժանացած հայազգի ռեժիսոր Ռուբեն Մամուլյանի կինն ընտանեկան կալվածքների եկամուտներից 1,1 մլն դոլար է նվիրել Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանի թատրոնի, կինոյի եւ հեռուստատեսության բաժնին, այնտեղ այդ բնագավառներում ռեժիսուրայի ամբիոն հիմնելու նպատակով, հաղորդում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

«Մեծ պատիվ է մեզ համար նման ականավոր արվեստագետի գործունեության հետ համագործակցելը, հատկապես այն առումով, որ Մամուլյանը շատ հեշտությամբ էր տեղափոխվում կինոյից թատրոն եւ թատրոնից կինո, մի բան, որին ցանկանում ենք մեր ուսանողները տիրապետեն իրենց ուսման ընթացքում», նշել է այս առթիվ բաժնի ղեկավար Ռոբերտ Ռոզենը:

Համալսարանի արխիվային բաժնի աշխատակիցների ջանքերով վերջերս վերականգնվել են Մամուլյանի ֆիլմերից մի քանիսը, այդ թվում «Սիրիր ինձ այս գիշեր» (1932 թ.) Մորիս Շեւալիեի խաղով, «Ծափահարություններ» (1929 թ.), «Քաղաքի փողոցները» (1931 թ.), «Երգ երգոց» (1933 թ.), «Բեքի Շարփ» (1935 թ.), «Բարձրահասակ, թիկնեղ եւ սիրուն» (1937 թ.) եւ «Զորոյի նշանը» (1940 թ.):

Քննադատների միահամուռ գնահատմանն է արժանացել 1928 թվին Բրոդվեյում բեմադրած նրա «Պորգի» ներկայացումը՝ ամբողջովին սեւամորթ դերասաններով: «Պարամաունթ» ստուդիան [illegible] Մամուլյանի հետ՝ նկարահանելու «Ծափահարություններ» ֆիլմը 1929-ին: Նա հաճախ է վերադարձել թատրոն իր կինոնկարահանումների ընթացքում՝ բեմադրելով «Պորգի եւ Բեսը» (1935 թ.) եւ «Կարուսել» (1945 թ.) [illegible]: Մրցանակի է արժանացել 1943 թվին «Օկլահոմա» նկարահանելու համար: Մահացել է 1987 թվին, 90 տարեկանում:

Վերոհիշյալ ֆիլմերից բացի նկարահանել է նաեւ դասականներից այնպիսի ֆիլմեր, ինչպիսին են «Դոկտ. Ջեքիլ ու միստր Հայդը» (1932 թ.), «Քրիստինա թագուհին» (1934 թ.), «Նորից ենք ապրում» (1934 թ.), «Ոսկե տղան» (1939 թ.), «Արյուն եւ ավազ» (1941 թ.), «Ամռան արձակուրդ» (1948 թ.) եւ «Մետաքսե գուլպաներ» (1957 թ.) կինոնկարները:

Տ. Օ.

Բեռնար Կազոնի. «Պետք չէ հուսախաբ լինել»

Հայաստանի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Բեռնար Կազոնին հարցազրույց է տվել ՖԻՖԱ-ի՝ ֆրանսերենով թողարկվող պաշտոնական կայքին, որը ՀՖՖ-ի մամուլի քարտուղարության կողմից թարգմանվել եւ որոշակի կրճատումներով ներկայացնում ենք ստորեւ: Կրճատված են այն տեսակետներն ու տեղեկությունները, որոնք բազմիցս հնչել են Հայաստանի զանգվածային լրատվամիջոցներում:

Մարսելի «Օլիմպիկի» եւ Ֆրանսիայի ազգային հավաքականի նախկին ձախ եզրային Բեռնար Կազոնին վերջին ժամանակների իր մարզչական փորձություններում հաճախ է ցավ զգացել: Ընդունելով Հայաստանի ազգային հավաքականը մարզելու առաջարկը, թուլոնցին բոլորովին էլ հեշտ ուղի չի ընտրել: Սակայն հենց դա էլ հանդիսացել է պատճառը: Գիտակցելով իրեն բաժին հասած ահռելի աշխատանքը, նա միաժամանակ համոզված է, որ հայկական ֆուտբոլը զարգանալու հնարավորություններ ունի: 2006 թ. ՖԻՖԱ-ի «Աշխարհի գավաթի» նախնական փուլի մեկնարկային խաղերում կրած անհաջողությունները նրա կարծիքը չեն փոխել:

- Ի՞նչը Ձեզ դրդեց ընդունելու այդ առաջարկը:

- Փորձությունն ուղղակի հետաքրքրական թվաց ինձ: Բոլորին չէ, որ հնարավորություն է ընձեռվում ստանձնել հավաքականի ղեկը եւ ոչ մի պրոֆեսիոնալ այդ հնարավորությունը բաց չի թողնի: Միաժամանակ իսկայական անելիքներ կան հայկական ֆուտբոլում, եւ հենց այդ հանգամանքն էլ ինձ ավելի դրդեց: Ես մեծ խանդավառությամբ եմ մոտենում այն մտքին, որ հնարավորություն է ընձեռված փոփոխություններ իրականացնել:

- Դուք միայնակ չեք մեկնել եւ որոշել եք գնալ Ձեր ընկերոջ ու Մարսելի «Օլիմպիկում» Ձեր թիմակից Բեռնար Պարդոյի հետ:

- Կարեւոր է, երբ այդքան հեռվում միայնակ չես: Դժվար է աշխատել առանց նեցուկի եւ այդ պարագայում ավելի լավ է, որ նեցուկն ընկեր է: Բեռնարի մայրը հայ է եւ դա նույնպես օգնություն է: Ես համոզված էի, որ նա կատարելապես կիրականացնի այդ գործառույթը:

- Երկու ամիս անց ի՞նչ եզրակացության եք հանգել:

- Շատ անելիքներ կան: Անհրաժեշտ է կառուցվածքային փոփոխություններ իրականացնել: Բոլորս պետք է գիտակցենք հայ ֆուտբոլիստների ֆիզիկական պատրաստվածության անհրաժեշտությունը: Պետք է կարողանանք զարգացնել մոտեցումները բժշկական զննումներին, հոգեբանական վիճակին: Միայն երկար աշխատանքով է հնարավոր փոփոխություն մտցնել իրավիճակի մեջ: Իհարկե եթե կարողանայինք լավ արդյունքի հասնել, ամեն ինչ ավելի արագ կընթանար:

- Ո՞րն է Ձեր ներկայիս խնդիրը:

- Հայկական ֆուտբոլն այսօր միջին մակարդակի վրա է, բայց պետք չէ հուսախաբ լինել: Ժամանակ է անհրաժեշտ գործադրած ջանքերի արդյունքները քաղելու համար: Բայց մի նախապայման կա. բոլորի ջանքերը պետք է ուղղված լինեն մի գաղափարի իրագործմանը: Ես ունեմ խաղացողներ, որոնք թեեւ հանդես են գալիս արտասահմանյան թիմերում, կատարելագործում են իրենց, որոշ չափով եւ ընդունված են որպես աստղեր, բայց, այնուամենայնիվ, նրանցից ոչ մեկն էլ իր ակումբի առաջատարը չէ: Հետեւաբար անհրաժեշտ է այն գիտակցումը, որ ոչ մեկը մյուսից առավել չէ եւ բոլորը պետք է հավասարապես ներդնեն իրենց ջանքերը: Նույնը վերաբերում է նաեւ մեր հանդիսատեսին: Մեր երկրպագուները մեր հանդեպ պետք է մի քիչ համբերատար լինեն:

- Մարսելի «Օլիմպիկում» եւ Կաննում Ձեզ այնքան էլ չօգնեցին Ձեր մարզչական գործունեության մեջ:

- Գիտեմ, անիվը պտտվում է: Այսօր Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահը ցանկանում է առաջընթաց տեսնել, եւ ինձ քարտ բլանշ է տվել: Երբ ես որեւէ բան եմ խնդրում, ինձ անմիջապես օգնում են: Չորս հոգով միանգամից մատուցում են: Մեծ հաճույք է նման պայմաններում աշխատելը:

-Ի՞նչ կասեք առաջին երկու հանդիպումների մասին:

-Դժվար է պատասխանել: Մակեդոնիայի հետ խաղին նախապատրաստվելիս ֆուտբոլիստների մեծ մասն իմ տրամադրության տակ եղավ միայն նախօրեին: Դա ամենեւին էլ փայլուն չէ «Աշխարհի գավաթի» խաղին նախապատրաստվելու համար: Բայց մեր անհաջողությունը սեփական հարկի տակ, Ֆինլանդիայի հետ խաղում, վհատեցրեց ինձ: Մենք լավ խաղացինք, բազում վտանգավոր պահեր ստեղծեցինք, բայց պարտվեցինք կենտրոնացվածության բացակայության պատճառով: Այնուամենայնիվ, պետք չէ երազել: Այսօր մենք չենք կարող հաղթել Հոլանդիային, Չեխիային, մտնել աշխարհի առաջնության եզրափակիչ: Ոչ, մեր նպատակն ավելի շուտ խաղից խաղ հմտանալը պիտի լինի, որից հետո հնարավոր է բարձր արդյունքների հասնել: Ձմեռային հանգստի ընթացքում կփորձենք մի քանի հավաքներ անցկացնել՝ ավելի խորքային աշխատանք տանելու համար:

ՕԼԻՄՊԻԱԴԱ-2006

Ներկայացվեց Թուրինի օլիմպիադայի թալիսմանը

2006 թ. Թուրինում կայանալիք ձմեռային օլիմպիական խաղերի մեկնարկից 500 օր առաջ կազմկոմիտեն ներկայացրեց համաշխարհային սպորտի այդ խոշորագույն ստուգատեսի թալիսմանը: Դրա հեղինակը տորոնտացի նկարիչ Պեդրո Ալբուկերկեն է: Թալիսմանը ներկայացնում են երկու մասկոտներ՝ ձյունե Նեւեն եւ սառցե Գլիցը: Կարմիր գույնով պատկերված կլոր գլխով Նեւեն խորհրդանշում է ձյան փաթիլը, իսկ կապույտ գույնով Գլիցը խորհրդանշում է սառցե խորանարդիկ: Ի դեպ, իտալերեն Նեւե նշանակում է ձյուն: Ալբուկերկեի ստեղծած թալիսմանը լավագույնն է ճանաչվել ներկայացված 237 էսքիզների մեջ: Ժյուրիի կարծիքով, Նեւեն եւ Գլիցը լավագույնս են խորհրդանշում ձմեռային օլիմպիական խաղերի ոգին: Ըստ նրանց, Նեւեն խորհրդանշում է մարզիկների շարժումների ներդաշնակությունը, իսկ Գլիցը՝ ատլետների ուժն ու հզորությունը:

Այսօրվանից Իտալիայում վաճառքի կհանվեն օլիմպիադայի թալիսմանները: Իսկ 2005 թ. հոկտեմբերին Նեւեի եւ Գլիցի մասնակցությամբ 52 սերիանանոց մուլտֆիլմ կթողարկվի: Թալիսմանի ներկայացումն օլիմպիադայի կազմկոմիտեի առաջին քայլն էր: Նոյեմբերի 4-ից կսկսվի օլիմպիադայի տոմսերի վաճառքը, իսկ դեկտեմբերի 7-ին կներկայացվի օլիմպիական ջահը:

Ջորկաեֆը կխաղա «Բլեքբյոռնում»

Ֆրանսիայի հավաքականի նախկին կիսապաշտպան, 36-ամյա Յուրի Ջորկաեֆը մինչեւ 2005 թ. հունվարը պայմանագիր է կնքել անգլիական «Բլեքբյոռն» ակումբի հետ: Հունվարին նա ակումբի ղեկավարության հետ կքննարկի թիմում իր հետագա գործունեությունը շարունակելու հարցը: Նշենք, որ մինչ այդ Ջորկաեֆը խաղում էր անգլիական «Բոլտոնում», որի հետ պայմանագրի ժամկետը լրանալուց հետո ֆրանսիացի ֆուտբոլիստը որոշ ժամանակ գործազուրկ էր մնացել:

Մարկ Հյուզը գլխավորեց «Բլեքբյոռնը»

Ուելսի հավաքականի գլխավոր մարզիչ Մարկ Հյուզը ստանձնել է նաեւ անգլիական «Բլեքբյոռնի» ղեկը: Նա կփոխարինի «Նյուքասլ» տեղափոխված Գրեմ Սունեսին: Ակումբի հետ Հյուզը պայմանագիր է կնքել «2+1» տարբերակով: Մինչեւ այս տարվա ավարտը նա կհամատեղի երկու պաշտոնները, իսկ հաջորդ տարվանից ողջ ուշադրությունը կդարձնի «Բլեքբյոռնին»: Ուելսի հավաքականին հոկտեմբերի 9-ին եւ 13-ին ընտրական երկու մրցախաղեր են սպասում Ադրբեջանի եւ Հյուսիսային Իռլանդիայի հավաքականների հետ:

Եվրոպան կողմ է աշխարհի թիմային առաջնությանը

ՈՒԵՖԱ-ի նստավայրում եվրոպական առաջատար ակումբների ներկայացուցիչների մասնակցությամբ հանդիպման ժամանակ համաձայնություն է ձեռք բերվել աշխարհի ակումբային առաջնությանը մասնակցելու վերաբերյալ: Մյունխենի «Բավարիայի» նախագահ Կարլ Հայնց Ռումենիգեն հայտարարել է, որ եվրոպական ակումբները փոխել են իրենց դիրքորոշումն աշխարհի թիմային առաջնությանը մասնակցելու հարցի մասին: Առաջնության մրցակարգը ՖԻՖԱ-ի կողմից փոփոխվելուց հետո Եվրոպայի ուժեղագույն ակումբը համաձայնել է մասնակցել աշխարհի առաջնությանը:

Աշխարհի առաջիկա առաջնությունը կկայանա 2005 թ. դեկտեմբերի 11-18-ը Տոկիոյում: Չեմպիոնի կոչումը կվիճարկեն վեց մայրցամաքների ուժեղագույն ակումբները: Սա փաստորեն կփոխարինի Միջմայրցամաքային գավաթի խաղարկությանը: Հիշեցնենք, որ ամեն տարվա դեկտեմբերին պատվավոր մրցանակը վիճարկում էին Եվրոպայի չեմպիոնների լիգայի հաղթողն ու Լիբերտադորեսի գավաթակիրը:

Ռունիի տպավորիչ նորամուտը

Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի 2-րդ տուրի առաջին 8 հանդիպումներն աչքի ընկան բարձր արդյունավետությամբ: Խփվեց 31 գնդակ: Տուրի գլխավոր իրադարձությունը Ուեյն Ռունիի տպավորիչ նորամուտն էր «Մանչեսթր Յունայթեդի» կազմում: 18-ամյա ֆուտբոլիստը, որի համար «Մանչեսթր Յունայթեդը» 27 մլն ֆունտ ստեռլինգ էր վճարել «Էվերտոնին», «Ֆեներբահչեի» դարպասը 3 գնդակ խփեց՝ մեծ ներդրում ունենալով թիմի խոշոր հաշվով հաղթանակում (6-2): Խաղից հետո թիմի գլխավոր մարզիչ Ալեքս Ֆերգյուսոնը չէր թաքցնում հիացմունքը նորեկի խաղից. «Նրա նորամուտը պարզապես ֆանտաստիկ էր: Նա հիանալի խաղաց: Համոզված եմ, որ նա մեծ օգուտ կտա թիմին: Ռունին մեծ ներուժի տեր ֆուտբոլիստ է»:

Այս հաղթանակի շնորհիվ «Մանչեսթր Յունայթեդը» գլխավորեց «D» խմբի աղյուսակը: Նույն խմբում հանդես եկող «Լիոնի» ֆուտբոլիստները հյուրընկալվելիս 2-1 հաշվով պարտության մատնեցին չեխական «Սպարտային»: Արդեն 7-րդ րոպեին Յունը առաջ մղեց Ֆրանսիայի չեմպիոնին: Ճիշտ է, Էսիենին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը, սակայն 2-րդ խաղակեսում Վիլտորը խփեց հաղթական գնդակը:

Հաջող են մեկնարկել Կիեւի դինամոյականները, որոնք առաջին տուրում «Ռոմայի» նկատմամբ տեխնիկական հաղթանակ (3-0) տոնելուց հետո Կիեւում պարտության մատնեցին «Բայերին»: Ընդ որում, մինչեւ 74-րդ րոպեն հաշիվը հավասար էր (2-2): Դինամոյական Չերնատը առաջ մղեց իր թիմին, իսկ ավելացված ժամանակում հաշիվը դարձրեց 4-2:

Նույնքան հաշիվ գրանցվեց նաեւ «B» խմբի մյուս խաղում՝ «Ռեալի» եւ «Ռոմայի» մրցավեճում: Հանդիպումն անհաջող սկսվեց իսպանացիների համար, որոնք 21-րդ րոպեին արդեն պարտվում էին 0-2 հաշվով: Իտալացիներից աչքի էին ընկել Դե Ռոսին եւ Կասանոն: Սակայն իրենց վճռական խոսքն ասացին «Ռեալի» «աստղերը»: Երկու անգամ աչքի ընկավ Ռաուլը, մեկական գնդակ խփեցին Ֆիգուն ու Ռոբերտո Կառլոսը: Հատկանշական է, որ երկու թիմերն էլ անհաջող էին հանդես եկել իրենց առաջնությունների վերջին տուրում, երկու ակումբներում էլ գլխավոր մարզիչները հրաժարական էին տվել:

Արդյունավետ խաղով աչքի ընկավ նաեւ Մյունխենի «Բավարիան», որը սեփական հարկի տակ հյուրընկալել էր «Այաքսին»: Այդ խաղում իրեն հիանալի դրսեւորեց «Բավարիայի» հարձակվող Ռոյ Մաքայը՝ դառնալով «հեթ-տրիկի» հեղինակ: Մեկ գնդակ էլ խփեց Զե Ռոբերտոն՝ ավարտելով մրցակցի ջախջախումը (4-0): Իսկ ահա նույն խմբում հանդես եկող «Յուվենտուսը» Թուրինում ընդամենը մեկ անգամ կարողացավ գրավել իսրայելական «Մաքաբիի» դարպասը: Հաղթական միակ գոլի հեղինակը Կամորանեզին էր, որն անկյունայինից Նեդվեդի փոխանցումից հետո գրավեց մրցակցի դարպասը:

«A» խմբում առաջատարի դերը ստանձնեց հունական «Օլիմպիակոսը», որը սեփական հարկի տակ 1-0 հաշվով պարտության մատնեց «Լիվերպուլին». միակ գնդակը 17-րդ րոպեին խփեց Ստոլտիդիսը: Այդ հաղթանակը կարելի է պատմական համարել, քանի որ վերջին անգամ «Օլիմպիակոսը» անգլիական ակումբների նկատմամբ հաղթանակ էր տոնել 1972 թ.: Այն ժամանակ ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարում հույները հաղթել էին «Տոտենհեմին»: Ողջ հանդիպման ընթացքում «Լիվերպուլին» այդպես էլ չհաջողվեց լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին: Թիմի մարզիչ Բենիտեսը պահեստայինների նստարանին էր թողել Կյուելին ու Սիսեին, ինչը սխալ որոշում էր եւ թուլացրել էր «Լիվերպուլի» հարձակողական ներուժը:

Անցյալ մրցաշրջանում «Մոնակոն» սեփական հարկի տակ 8-3 անսովոր հաշվով հաղթել էր «Դեպորտիվոյին»: Այս անգամ ֆրանսիացիները բավարարվեցին 2 անպատասխան գնդակով: Հանդիպման հերոսն աֆրիկացի հարձակվող Էմանուել Ադեբայորն էր, որն առաջին 10 րոպեներին գոլային երկու հիանալի փոխանցում կատարեց եւ Կալոնն ու Սավիոլան գրավեցին մրցակցի դարպասը:

Մրցաշարային աղյուսակներ

«A» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Օլիմպիակոս	2	1	1	0	1-0	4
2. Լիվերպուլ	2	1	0	1	2-1	3
3. Մոնակո	2	1	0	1	2-2	3
4. Դեպորտիվո	2	0	1	1	0-2	1

«B» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Դինամո	2	2	0	0	7-2	6
2. Բայեր	2	1	0	1	5-4	3
3. Ռեալ	2	1	0	1	4-5	3
4. Ռոմա	2	0	0	2	2-7	0

«C» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Բավարիա	2	2	0	0	5-0	6
2. Յուվենտուս	2	2	0	0	2-0	6
3. Մաքաբի	2	0	0	2	0-2	0
4. Այաքս	2	0	0	2	0-5	0

«D» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Մանչեսթր յուն.	2	1	1	0	8-4	4
2. Լիոն	2	1	1	0	4-3	4
3. Ֆեներբահչե	2	1	0	1	3-6	3
4. Սպարտա	2	0	0	2	1-3	0

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Թանգարանների աշխատողների եւ բարեկամների ասոցիացիա» ՀԿ-ը եւ Հայաստանի ազգային պատկերասրահը Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի աջակցությամբ հայտարարում են «ԵՍ ԱՆՏԱՐԲԵՐ ՉԵՄ» խորագրով **պլակատի մրցույթ** հետեւյալ թեմաներով՝ *կոռուպցիա, աղքատություն, արտագաղթ, էկոլոգիա:* Մրցույթին մասնակցել ցանկացող բոլոր արվեստագետները կարող են ներկայացնել նախկինում չցուցադրված առավելագույնը չորս աշխատանք՝ 70x50 սմ չափի, ցանկացած տեխնիկայով:

Լավագույն աշխատանքների համար սահմանված են հետեւյալ մրցանակները՝

մեկ առաջին մրցանակ - ***500 ԱՄՆ*** *դոլարին համարժեք դրամ,*

մեկ երկրորդ մրցանակ - ***300 ԱՄՆ*** *դոլարին համարժեք դրամ,*

երկու երրորդ մրցանակ յուրաքանչյուրը՝ 150 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Խրախուսական մրցանակի արժանացած մեկ պլակատ կցուցադրվի Երեւան քաղաքի կենտրոնում՝ մեծ ազդավահանակի վրա: Մրցանակների արժանացած աշխատանքները կտիրաժավորվեն:

Ժյուրիի կողմից ընտրված աշխատանքները կդառնան Հայաստանի ազգային պատկերասրահի սեփականությունը, կտպագրվեն կատալոգում եւ կցուցադրվեն ազգային պատկերասրահում եւ մարզերում:

Հետաքրքրված արվեստագետները պետք է մինչեւ 2004թ. դեկտեմբերի 25-ը ներկայացնեն աշխատանքները /պլանշետի վրա, առանց ստորագրության՝ ընտրության անաչառությունը առավելագույնս ապահովելու համար/:

Կենսագրական տվյալներ եւ ներկայացված աշխատանքների ցանկը ներկայացնել հետեւյալ հասցեով. Երեւան, Հանրապետության հրապ. Հայաստանի ազգային պատկերասրահ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել **հեռ. 583463, 580816,** ***http//:www.gallery.am***

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում են **ՀՀ «Երկաթուղու Երեւանի ջրամատակարարման տեղամաս» ՓԲԸ Արմավիրի կայարանի**, տեխնիկական նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսներից 1,7 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվությունների նախագծերը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. հոկտեմբերի 14-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում են **ՀՀ «Երկաթուղու Երեւանի ջրամատակարարման տեղամաս» ՓԲԸ Սանահինի կա**յարանի 5 կապտաժային աղբյուրներից խմելու, տնտեսական եւ տեխնիկական նպատակներով 15,8 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվությունների նախագծերը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. հոկտեմբերի 14-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ-ում ձեռնարկությունների գործունեության հետազոտության իրականացման նպատակով պատրաստվում է իրականացնել վիճակագրական հարցում, ինչի հետ կապված հայտարարում է մրցույթ պայմանագրային աշխատակիցներ ներգրավելու համար:

Աշխատանքի բնույթը.

- այցելություն ընտրանքային կարգով ընտրված ձեռնարկություններ՝ տեղում հարցումն իրականացնելու եւ հարցաթերթիկները լրացնելու նպատակով,
- հարցման արդյունքների մուտքագրում համակարգիչ, ստուգում եւ ճշգրտում:

Անհրաժեշտ պահանջներ.

- բարձրագույն տնտեսագիտական կրթություն,
- մակրոէկոնոմիկայի եւ միկրոէկոնոմիկայի հիմունքների իմացություն,
- ձեռնարկությունների ֆինանսական վերլուծության եւ տնտեսական վիճակագրության հիմունքների իմացություն,
- MS EXCEL եւ MS WORD համակարգչային փաթեթների բավարար իմացություն:

Դիմումները ստորեւ ներկայացված փաստաթղթերի հետ միասին մինչեւ հոկտեմբերի 8-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ԿԲ աշխատակազմի Անձնակազմի կառավարման բաժին.

- Դիմում
- Անձնագրի պատճեն
- Ինքնակենսագրություն
- Դիպլոմի եւ դիպլոմի միջուկի պատճեն (ուսանողների համար պարտադիր չէ)
- Երկու գունավոր լուսանկար (3*4)
- Զինվորական գրքույկ
- Կադրերի հաշվառման անձնական թերթիկ

Անհրաժեշտության դեպքում զանգահարել հետեւյալ հեռախոսահամարներով.

Անձնակազմի կառավարման բաժին	*56 14 40*
Վիճակագրության վարչություն	*58 95 15*

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում են **ՀՀ «Երկաթուղու Երեւանի ջրամատակարարման ուղեմաս» ՓԲԸ Գյումրիի** երկաթգծի կայարանի, խմելու, տնտեսական եւ տեխնիկական նպատակներով, [illegible] աղբյուրներից եւ խորքային երեք հորերից 11,1 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվությունների նախագծերը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. հոկտեմբերի 14-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սեպտեմբերի 29-ից սահմանվել է տարեկան 16 տոկոս:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

Հարավային Կովկասում Հայնրիխ Բյոլի անվան հիմնադրամի տարածաշրջանային գրասենյակը հայտարարում է տարածաշրջանային կրթաթոշակային մրցույթ

Նորագույն պատմության, սոցիոլոգիայի եւ քաղաքների կայուն զարգացման ոլորտներում

(Երիտասարդ պատմաբանների, սոցիոլոգների, քաղաքագետների, ճարտարապետների եւ էկոլոգների համար)

Նորագույն պատմություն (1900-2000 թթ.)

- Ամենօրյա պատմություն
- Էթնիկ եւ դավանական պատկանելիության նշանակության փոխակերպում
- Քաղաքի սոցիալական եւ մշակութային կենսագրություն
- Քաղաքական բռնությունների պատմությունը կովկասյան հանրապետություններում
- Ամբողջատիրության դեմ դիմադրությունը կովկասյան հանրապետություններում 1920-50-ական թթ.
- Այլախոհության պատմությունը, ազգային շարժումները եւ մարդու իրավունքները կովկասյան հանրապետություններում Ստալինի մահից հետո

Սոցիոլոգիա

- Անհավասարության եւ խտրականության հիմնահարցեր
- Իշխանության ոչ ֆորմալ կառուցվածքները
- Կրոնի դերը ժամանակակից պետության եւ հասարակության մեջ
- «Յուրայինը» եւ «օտարը» հասարակության մեջ
- Գենդերային դերերի փոխակերպումը ժամանակակից հասարակության մեջ

Քաղաքների կայուն զարգացում

- Քաղաքի էկոլոգիական եւ սոցիալական վերափոխումը
- Քաղաքների զարգացմանն ուղղված նորմատիվ-իրավական եւ ինստիտուցիոնալ համակարգի վերլուծություն եւ առաջարկներ
- Հասարակության մասնակցության ձեւերը քաղաքների զարգացմանը միտված որոշումների կայացման գործընթացում
- Փոքր ու միջին քաղաքների խնդիրներն ու ներուժը
- Քաղաքային տեղագրություն

Հայնրիխ Բյոլի անվան հիմնադրամը գերմանական անկախ քաղաքական հիմնադրամ է, որը գործում է 1987 թ. եւ համագործակցում է Գերմանիայի Կանաչների կուսակցության հետ: Հիմնադրամն աջակցում է նախագծեր քաղաքացիական հասարակության զարգացման, հատկապես գենդերային քաղաքականության եւ կանանց իրավունքների, ինչպես նաեւ բնապահպանության ոլորտներում:

Տարածաշրջանի կրթաթոշակային ծրագրի նպատակը

Կրթաթոշակային ծրագիրը նախատեսված է հարավկովկասյան տարածաշրջանում իրականացվելիք գիտական հետազոտությունների համար:

Ծրագրի նպատակներն են.

- Օժանդակել երիտասարդ գիտնականներին՝ հասարակական գիտությունների նորացման միջոցով Հարավային Կովկասում տարածաշրջանային համագործակցության շրջանակներում անհատական, միջառարկայական գիտական հետազոտություններ իրականացնելու համար.
- Օժանդակել Հարավային Կովկասում բարձրակարգ մասնագետների տարածաշրջանային ցանցի ձեւավորմանը:

Մրցույթի պայմանները

Տարածաշրջանային գիտահետազոտական կրթաթոշակի հայտ կարող են ներկայացնել 1969-1982 թթ. ծնված, բարձրագույն կրթություն ունեցող եւ Հարավային Կովկասի երկրներում մշտապես բնակվող անձինք: Երկու օտար լեզուների (արեւմտաեվրոպական եւ ռուսերեն) իմացությունը պարտադիր է: Հայտերը ընտրելիս հատուկ ուշադրություն է դարձվելու մեթոդաբանական առումով նորարարական աշխատությունների վրա, որոնք հաշվի են առնում որակական եւ համեմատական մեթոդները:

Կրթաթոշակների տեւողությունն ու ծավալը

Կրթաթոշակների տեւողությունը 12 ամիս է. 01.01.2004 31.12.2005. Կրթաթոշակների ծավալը կազմում է ամսեկան 200 եվրո: Լրացուցիչ նախատեսվում է նաեւ համընթաց ծրագիր, որը ներառում է սեմինարներ, ամառային դպրոց, հրատարակումներ եւ այլն:

Ընդհանուր ցուցումներ

- Կրթաթոշակը անհատական օժանդակություն է եւ չի կարող օգտագործվել կրթաթոշակային ծրագրից դուրս կատարվող նախագծերի ֆինանսավորման համար:
- Մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացնող անձի գիտական հաստատության հայցորդ կամ աշխատակից լինելը պարտադիր չէ:
- Ցանկության դեպքում հիմնադրամը ապահովում է անհրաժեշտ կապ գիտական խորհրդատուների հետ:
- Հիմնադրամը առաջնորդվում է սեռերի հավասարության սկզբունքով:
- Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ հայցաթերթիկները տեղադրված են Հարավային Կովկասում հիմնադրամի տարածաշրջանային գրասենյակի էլեկտրոնային էջում՝ www.boell.ge
- Հայտեր ներկայացնելու վերջնաժամկետը 2004 թ. հոկտեմբերի 31-ն է:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթեր

1. Տիտղոսաթերթ հետեւյալ առանձին տվյալներով. անուն, ազգանուն, ծննդյան թիվ, երկիրը, ոլորտը (պատմություն/սոցիոլոգիա/ուրբանիստիկա), մրցութային թեման, աշխատանքի անվանումը
2. Հայտաթերթիկ (տես www.boell.ge)
3. Տաբելյար ինքնակենսագրություն (CV)
4. Էսսե (3-5 էջ ծավալով), որտեղ պետք է ներկայացվեն մասնագիտական եւ անձնական հիմնավորումները, այն է՝ Ինչո՞ւ եմ ես հետաքրքրվում տվյալ թեմայով, ինչ գիտեմ ընտրված թեմայի վերաբերյալ, ինչ մեթոդներ եմ պատրաստվում կիրառել հետազոտության ընթացքում եւ տարեկան աշխատանքային պլան:
5. Երաշխավորագրեր երկու գիտնականների կամ այն հաստատության ղեկավարի կողմից, որտեղ դուք աշխատել եք (ինչպիսի կոնկրետ փորձ կամ գիտական աշխատանքով է հիմնավորված երաշխավորագիրը):
6. Բարձրագույն կրթության վկայական (բակալավր, մագիստրոս կամ 5-ամյա բարձրագույն կրթություն) գնահատականներով:
7. Գիտական աշխատությունների ցանկը (առկայության դեպքում) եւ հնարավորության դեպքում դրանց պատճենները՝ մինչեւ 20 էջ ծավալով:

Վերը նշված փաստաթղթերը (բացի գիտական աշխատություններից) պետք է ներկայացվեն ռուսերեն լեզվով: Հայտերի ոչ լրիվ փաթեթները չեն դիտարկվելու: Անպայման օգտագործեք համակարգչային տառատեսակներ:

Մրցույթի հայտերը ուղարկել հետեւյալ հասցեով.

Հարավային Կովկասում Հայնրիխ Բյոլի անվան տարածաշրջանային գրասենյակ
Վրաստան, Թբիլիսի, Ռադիանի փող., թիվ 5, 0179,
info@boell.ge ֆաքս. + 995 32 912897

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունյաց 70ա Գրանցման թիվ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 29.09.2004 Գինը՝ 100 դրամ